



«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

---

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
ԹԻՎ 1(24)

HISTORY AND POLITICS  
ACADEMIC JOURNAL  
№1(24)

ԵՐԵՎԱՆ - 2023

**Հանդեսը տպագրվում է «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական  
վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ**

**Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

### **Խմբագրական խորհուրդ**

Աշոտ Ներսիսյան, Աշոտ Գալստյան, Աշոտ Ենգոյան, Աննա Ասատրյան,  
Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Արմեն Ղազարյան (ՌԴ), Գարիկ  
Քեռյան, Եզնիկ Պետրոսյան, Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ), Կարապետ  
Մումճյան (ԱՄՆ), Հայկ Սարգսյան, Հովսեփ Աղաջանյան, Սարգիս  
Կազարով (ՌԴ), Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան, Վալերի  
Պոտյոմկին (ՌԴ), Ռաֆիկ Նահապետյան

**Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան**

**Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան**

DOI: <https://doi.org/10.59630/25792644-2023.1.24-3>

ПЕРЕСЕЛЕНИЕ АРМЯН ЕРЕВАНСКОЙ ОБЛАСТИ  
1804-1808 ГГ.

ВАЛЕРИЙ ТУНЯН

**Ключевые слова** - Закавказье, Россия, армяне, Ереванская область, переселение, мифотворчество, отношения, этносы.

**ВСТУПЛЕНИЕ**

В психотропной войне азерпропа против истории Армении миграционные проблемы относят к “тяжелому колониальному наследию” царской России, искажая территориально-этнические проблемы на территории Восточной Армении.<sup>1</sup> Самодержавие России обвиняется в создании из Ереванского ханства искусственного “христианского форпоста”,<sup>2</sup> “насаждение иноэтнических компонентов в регионе”,<sup>3</sup> везде мерещатся “азербайджанские земли”.<sup>4</sup> Осада Ереванской крепости 1804 г. представляется попыткой реализации “плана создания армянского буфера как важнейшей опоры с мусульманскими государствами”.<sup>5</sup> В этом контексте значение имеет рассмотрение переселенческого вопроса в Араратской долине в связи с

---

<sup>1</sup> **Шафиев Ф.** Истоки армяно-азербайджанского конфликта: события 1905-1906 годов. – «IRS – nasledie». 2008. - №4 (34). // <http://www.elibrary.az/docs/JURNAL/jrn2008555j.htm>

<sup>2</sup> Как Ираван превращали в Ереван, а Иреванское ханство – в монэтничную Армению. – <https://azerhistory.com/?p=6232>

<sup>3</sup> **Вердиева Х.Ю.** “Переселенческая политика Российской империи в Северном Азербайджане (XIX – начале XX вв.)”. Баку, 2016, с.2,5, 8.

<sup>4</sup> Иреванское ханство. Предисловие. Ответ. ред. Г. Наджафли Баку, 2010, с. 12, 13, 19, 20.

<sup>5</sup> Там же, с.295.

осадой русскими войсками Ереванской крепости в 1804 г. и последствий до 1808 г., требующей освещения в конкретной исторической ситуации.

3 января 1799 г. в Константинополе состоялось подписанию русско-османского союзного договора, позволившего Османской империи стать членом второй антифранцузской коалиции, включавшей Россию и Англию.<sup>1</sup> Заключенный союз был воспринят царем Павлом I как возможность активизировать политику в Закавказье. Было обращено внимание на содействие св. Эчмиадзина. 28 июля 1800 г. последовала грамота царя Павла I об утверждении иерарха Иосифа Аргутяна в сане католикоса всех армян, при наличии берата от союзного султана Селима III. Имперская грамота усиливала значение Эчмиадзинского престола как духовно-политического института в отношениях России, Османской империи и Персии. Россия приобретала твердую опору среди армянского населения Грузии.<sup>2</sup> 18 января 1801 г. самодержец Павел I подписал манифест о присоединении царства Картли-Кахетии к Российской империи. Подход был связан с кончиной царя Грузии Георгия XII.<sup>3</sup>

### **ПРИСОЕДИНЕНИЕ ЗАКАВКАЗЬЯ**

В рескрипте от 23 января 1801 г. на имя главноуправляющего гражданской частью на Кавказе К.Ф. Кнорринга предписывалось создать Грузинскую губернию, вместо ранее согласованного автономного царства, состоящего из семи округов. Из них три составляли северные части Восточной Армении - Лори, Памбак, Казах и Шамшадин. Говорилось о добровольном присоединении народов Закавказья. Выделялась значимость Армении: "Займитесь теперь не завоеванием, но приобретением добровольным соглашением Армении".<sup>4</sup> Преждевременная кончина И. Аргутяна 9

---

<sup>1</sup> Подписан Русско-турецкий договор, оформивший вступление Турции в антифранцузскую коалицию.- <https://www.calend.ru/events/6499/>

<sup>2</sup> Институт народов Азии Академии Наук (ИНА), ф. 58, оп. 1, д. 189, л.1.

<sup>3</sup> Полное собрание законов Российской империи. СПб., I-изд. 1830, т.40, N 30275.

<sup>4</sup> Архив Государственного совета, т. 2, стлб. 1284.

марта 1801 г.,<sup>1</sup> а за тем удаление от власти царя Павла I, на время спутало на время все расчеты.

12 сентября 1801 г. в Москве царь Александр I подписал новый манифест о присоединении Грузии к России. Мотивацией указывался разрушительный поход правителя Персии Ага Мухаммед хана в 1795 г., ответный поход россиян в 1796 г. до рек Куры и Аракса, приостановивший “Гибель Вашу”.<sup>2</sup> Заявлено об осуществление русскими частями разгрома “всех хищников, населяющих горы Кавказские и тех, кои раздирали области Персии и Великой Армении”.<sup>3</sup>

В инструкции к главнокомандующему русскими войсками в Грузии К.Ф. Кноррингу от 12 сентября 1801 г. затребовано привлечь на сторону России ханов Восточного Закавказья - Ереванского, Гянджинского, Шекинского, Ширванского, Бакинского. При этом важная роль в закреплении Закавказья отводилась армянскому народу и св. Эчмиадзину: “К особенному же наблюдению вашему предоставляем привлекать к себе нацию армянскую всякими обласканиями. Способ сей по много численности сего племени в сопределенностях Грузии есть один из надежнейших к приумножению силы народной и вместе к утверждению вообще по верности христиан. На сей конец соизволяем, чтобы вы оказывали ваше по возможности покровительство Араратскому патриаршему монастырю Эчмиадзину, содержали с главою церкви оною приязненные сношения”.<sup>4</sup>

В то же время имелось особое положение об организации переселенчества христиан в Грузию для закрепления новой окраины: “И особенное внимание обратить должно на привлечение в Грузию переселенцев из границы, наипаче христиан, а для ободрения таковых назначить их достаточное количество из пустопорожных земель, кои на сей конец потребно-предварительно описать и привести в известность”.<sup>5</sup> Подход имел дест-

---

<sup>1</sup> Лица армянской истории. Выпуск I. Религиозные деятели. - <http://noev-kov-cheg.ru/mag/2016-05/5418.html>

<sup>2</sup> Российский государственный исторический архив (РГИА), ф. 1377, оп. 1, д. 29, л.12.

<sup>3</sup> Там же, л. 13.

<sup>4</sup> ПВА, т. 1, N 33, с.66.

<sup>5</sup> Там же, с. 65.

руктивное содержание, которое затем отрицательно скажется на этническом составе Араратской страны.

Внешнее давление и внутренние разногласия обусловили появления двух патриарших престолов во главе с иерархами Давидом V Енкетци и Даниелем I Сурмареци, приведшей к длительной конфронтации. Если вначале самодержавие признало католикосом первого, то 19 мая 1802 г. состоялось императорская утвердительная грамота в пользу Даниеля.<sup>1</sup> Миропомазание состоялось 25 мая 1802 г. на реке Ефрат у монастыря св. Иоанна (Учкилиса).<sup>2</sup> Началась междоусобица.<sup>3</sup>

### **ЕРЕВАНСКИЙ ПОХОД**

Лишь после занятия Гянджи 3 января 1804 г. и получения Имеретией статуса протектората России<sup>4</sup> у главноначальствующего П. Д. Цицианова возникла возможность занятия Ереванской крепости. Правитель Ереванской области Мехмед хан оказался между двух огней: с одной стороны на него двигались шахские войска, а с другой - назревала опасность войны со стороны России. Ощущая безвыходность своего положения, Мехмед хан прибегнул к мерам устрашения армянского населения, стараясь выйти сухим из воды. По данным Нерсеса Аштаракаци, на грани удушения оказался юзбаши Габриел, но был выручен родственниками. Армянское население ждало прихода царских войск.<sup>5</sup>

Ереванский хан стал запасаться продовольствием.<sup>1</sup> Задействована политика лавирования. 25 мая 1804 г. Цицианов направил отношение заместителю министра иностранных дел кн. А.А. Чарторыйскому о готовности Мехмед хана принять российское подданство. В ходе переговоров хану предусматривалось представить следующие пункты: 1) восстановление католикоса Даниела на патриаршем престоле и направление католикоса Да-

---

<sup>1</sup> Собрание актов, относящихся к обозрению истории Армянского народа. Ереван, 2014, ч. I, с. 244, 245.

<sup>2</sup> РГИА, ф. 1284, оп. 3, д. 39, л. 300-307.

<sup>3</sup> ИНА, ф. 58, оп. 1, д. 73, л. 1 - 2.

<sup>4</sup> РГИА, ф. 1284, оп. 3, д. 10, л. 5, 6.

<sup>5</sup> ПВА, т. 1, N175, с. 212.

вида к Цицианову; 2) расположение российского гарнизона в Ереванской крепости; 3) признание верховной власти российского государя, который бы дал грамоту на ханство; 4) уплата дани в 80 тыс. руб. в год двумя сроками - в Новруз и в другую половину года; 5) сохранение за ханом владельческих прав, но без права смертной казни; 6) обеспечение возвращения семьи хана из Персии.

В то же время говорилось о возможности лукавства со стороны хана:<sup>2</sup> “При чем долгом ставлю донести Вашему Сиятельству, что ни на какие обещания персидских ханов полагаться невозможно; уверен будучи, что кроме страха приближением отряда произвести имевшиеся, никакие убеждения подействовать не могут”.<sup>3</sup>

Обращает внимание, что среди пунктов соглашения на переход ереванского хана в российское подданство на первом месте стояло признание прав католикоса Даниеля, что свидетельствовало как о важности Эчмиадзинского вопроса, так и о наличии повода для подчинения ханства. При этом покорение Ереванской крепости, по замыслу Цицианова, должно было содействовать присоединению Карсского пашалыка к закавказским владениям.<sup>4</sup>

Лишь 1 июня 1804 г. начался Ереванский поход из Тифлиса. Отряд Цицианова в 4561 человек, имеющий на вооружении 20-ть орудий выдвинулся из Памбака и 19 июля занял Эчмиадзин. Устроено передвижное полевое укрепление из 600 повозок (вагенбург), которое подверглось атаке персиян. Отпор в ходе сражения заставил их отступить. Начались стычки.<sup>5</sup> Гарнизон крепости составлял около 7 тыс. человек.<sup>6</sup>

2 июля 1804 г. было занято предместье Еревана. С 3-го июля Мехмед хан стал присылать примирительные письма Цицианову, через патриарха

---

<sup>1</sup> Там же, N176, с. 213, 216.

<sup>2</sup> АВПР, ф. Гл. Архив, I-10, 1804, д. 2, л. 1, 1 об.

<sup>3</sup> Там же, л. 2.

<sup>4</sup> **Дубровин Н. Ф.** Закавказье от 1803 – 1806 года..., с. 479.

<sup>5</sup> ПВА, т.1, N 185, с.225-227.

<sup>6</sup> **Нерсисян М. Г.** Освобождение Еревана от ханского ига. - [http://hpi.asj-oa.am/2911/1/1977-3\(65\).pdf](http://hpi.asj-oa.am/2911/1/1977-3(65).pdf)

Даниеля, что заставило его воздержаться от бомбардировки. В начальном письме речь шла о неадекватном примирении. В “Дневнике похода русских войск на Ереван” отмечено: “Ныне хан прислал посольство с извинениями на письме в том, что стреляли по нашим войскам против его воли, и что он все готово выполнить кроме сдачи города”. На это последовал устный ответ Цицианова об условиях для ведения переговоров: “Прежде всех могущих быть переговоров он должен мне выдать патриарха Даниеля в оное достоинство высочайше избранного, также патриарха Давида и все богатство Эчмиадзинского монастыря, а потом, что не токмо условия делать о сдаче города, но и мыслить о том не могу”.<sup>1</sup>

На ответ было дано вначале 2 часа, но из-за просьб посланника и ожидания подхода обоза вагенбурга, он был продлен на сутки. Отказ обусловил 5 июля бомбардировку крепости Еревана, чтобы “сократить персидскую политику и устрашить стесненный там народ”.<sup>2</sup> Положение не выправило и войско наследного принца шаха Персии Аббас-Мирзы

Осада крепости Еревана оказалась несостоятельной из-за нехватки продовольствия и отсутствия тяжелой осадной артиллерии. 31 августа состоялось заседание Военного совета по вопросу штурма крепости Еревана. Выяснилась наличие сухарей для питания солдат лишь на два-три дня. В тылу фронду мутили грузинские царевичи. Имела роль несдержанность Цицианова в эпитетах для характеристики Баба хана и ереванского ханш, возбудивших злость от его угроз, “препятствующих хану подумать о сдаче города”. Цицианов на голосование Военного совета поставил альтернативу: штурм или отступление. Из семи участников совещания лишь Цицианов и ген. Портнягин проголосовали в пользу штурма, а оставшиеся высказались за отступление 2 сентября.<sup>3</sup> Учитывалось наличие множества больных солдат из-за санитарных условий, сильного гарнизона в Ереванской крепости, наличие в тылу многочисленной армии и напряженность в Грузии.

---

<sup>1</sup> ПВА, т.1, N 185, с. 228.

<sup>2</sup> Там же, с. 229.

<sup>3</sup> ПВА, N196, с.256.



Для приличия 31 августа Мехмед хану были направлены условия соглашения о переходе в русское подданство на ранее разработанных 4 пунктов, в качестве последнего шанса достойного решения занятия Ереванской крепости, которые вновь были отвергнуты. Ночью был получен отрицательный ответ Мехмед хана, с непониманием сделанных “обещаний” в его адрес. Негативной была представлена позиция мусульманских священнослужителей и местных мусульман. Окончательный ответ предлагалось дать через декаду, когда помощь, по расчету хана, должен был оказать шах Персии: “Духовенство его крайне вооружило народ тем, что кн. Цицианов поставил в мечети свою церковь и просит обождать 10 дней”.<sup>1</sup> В условиях отсутствия провианта и жары, приведшей к изнеможению русских частей, 3 сентября 1804 г. осада Ереванской крепости была снята. 6 сентября был оставлен Эчмиадзинский монастырь.<sup>2</sup> Вместо Мехмед хан правителем Ереванской области стал сардар Мехти-Кули хан.

### **ВЫСЕЛЕНИЕ АРМЯН**

В тоже время возникла демографическая катастрофа для армян Восточной Армении. Главноуправляющий Грузии П.Д. Цицианов для стабилизации положения дел в Картли-Кахетии вывел из Ереванской области 11000 семейств (55500 чел.), под предводительством иерарха Иоаннеса, а из Вагаршапата переселилось 400 церковных крестьян.<sup>3</sup> Самостоятельно мелик Габриел и юзбаши Оганес Гегамовы вывели из Еревана в Грузию 400 семейств (2 тыс.чел).<sup>4</sup>

13 августа 1805 г. Цицианов затребовал вновь присылки 1000 семейств ереванских армян (5000 чел. ), в частности из с. Егварда, для деятельности в форштадте Елисаветполя и земледельческих работ.<sup>5</sup> Архиепископу Иоаннесу сообщено о наличии пустопорожних мест для заселения в Елисаветполе: “Зная усердие вашей пречестности, покорно прошу поспе-

---

<sup>1</sup> Там же, с. 276.

<sup>2</sup> Там же, N199, с.275-277.

<sup>3</sup> АКАК, т. 2, N 541, с.276, N1255, с. 626.

<sup>4</sup> Архив Государственного Совета. СПб., 1878, т.4, ч.1, стлб.485.

<sup>5</sup> АКАК, т. 2, N 1259, с. 627, 628.

шить сюда ереванских армян, которым я прикажу дать каждой семье готовый дом, сад и пашню, что кажется весьма должно быть для них выгодно, только чтобы они не были ни монастырские, ни меликовы, ни юзбашей, а свободные деревенские жители, как например, селения Егвард”. Оговаривались условия приема: “Здесь же они будут на прежнем положении, т.е. три года даны будут льготные и никаких повинностей с них не будут взыскиваемо, а по прошествии оных должны будут платить положенный оброк. Причем прошу не замедлить присылкой их, дабы они успели еще сей осенью запахать для себя на будущий год”.<sup>1</sup>

За два года, Ереванская область лишилась более 60 тыс. армян, что изменило демографический облик Араратской долины. Причина имела политэкономический характер. Расширялась этносоциальная база самодержавия в новоприсоединенном крае, она позволяла сохранять стабильность в Грузии и подрывать хозяйственные устои Ереванского ханства. Тактический выигрыш от переселенчества имело самодержавие России, а в этническом плане произошла дезарменизация Ереванской области. Реализована установка царя Александра I по закреплению Грузии переселенцами христианами, продолжающей политику царя Грузии Ираклия II.<sup>2</sup> В любом случае тяготы войны сказывались на положении армян и св. Первопрестола Эчмиадзина.

## СИТУАЦИЯ В ЕРЕВАНЕ

Трагичность ситуации состояла в том, что и персияне выселяли ереванских жителей. 21 августа 1805 г. ереванские армяне обратились за помощью к ереванскому мелику Абрааму и юзбаши Габриелю, находящимся в Каракилисе: “Мы ожидаем нетерпеливо помощи вашей в скорости: если замедлите, то нас увезут и разорят; через 10 дней 1.000 почетных домов берут персияне в крепость и будьте уверены, что нас переселят городских жителей, кроме старшин, - о чем Келб-Али хан (правитель Нахичевана)

---

<sup>1</sup> Аханиянц Г Архив Истории Армении, кн.5,Тифлис, 1902, с.426.-На арм. яз.

<sup>2</sup> Про поход Ираклия в Эривань и переселение армян из стран Араратских в Грузию.//Летопись, протоиерея Тер-Огана Воскерчянца.- Кавказская Старина,1873, N 7-8, с.192-194.

говорил Асад аге”. Проецировалось окончательное опустошение Еревана после цициановского вывода жителей: “В городе никто не остается, - все выйдут к вам... Эривань совсем разорили. Сделайте такое дело, чтобы мы не получили Мамед-ханову участь”.<sup>1</sup>

Мелик Абраам и юзбаши Габриел запросили Цицианова вместо дальнейшего выселения армянского населения заняться освобождением г. Еревана. На это он разразился гневным посланием от 26 августа 1805 г.: “А что вы просите моей защиты оставшимся в Эривани армянам, погибающим от неверных, то вопрошаю заслуживают ли изменники покровительства. Пусть их гибнут как собаки: они достойны сей участи, ибо в прошлом году, когда я с непобедимыми Российскими войсками окружил Эриванскую крепость, сии недостойные ни малейшего сожаления занимали Нарынкале и, могли мне оный сдать, не сделали того”. Отвергнуто приглашение по занятию Еревана: “Я сам знаю и когда взять Эриванскую крепость. Вот вам мой ответ, а вы живите покойно, заводите дома и пашите поля”.<sup>2</sup>

Свое отношение на это обращение о помощи Цицианов представил в рапорте царю Александру I от 29 августа 1805 г. В нем указывалось, что новый правитель ереванского ханства Мехти-Кули хан разместил в местной крепости 2 тыс. персидской пехоты с намерением переселить всех ереванских армян, что встретило сопротивление: “Эриванцы взбунтовались и большая их часть не повинуются новому хану”. Это позволило мелику Абрааму и юзбаши Габриелю организовать побег 230 армянских семейств (1150 человек) и скрыться в Памбакской провинции. Из этого Цицианов сделал вывод о полезности происшедшего для сохранения всех выселенцев в Грузии: “Таким-то образом можно теперь во всей достоверности сказать, что после сего происшествия ни один грузин, ни один армянин или татарин, живущие в Грузии, не отважатся более искать защиты и покровительства от Персии, зная совершенно, что вся цель Баба хана в том со-

---

<sup>1</sup> АКАК, т.2, N 1257, с. 627.

<sup>2</sup> АКАК, т.2, N 1257, с. 627.

стоит, дабы и самих тех, кои ему отдаются и ему вспомоществуют, обманув, насильственным образом переселит после во внутрь Персии“.<sup>1</sup>

В условиях раздразива Цицианова и местных лидеров армянское население г. Еревана пошло по пути самоспасения. В отношении ген.-м. Несветаева к Цицианову от 7 сентября 1805 г. из Каракилиса указано о “эриванских обстоятельствах”: “Между начальниками Эривани происходит великая ссора, все жители Эриванские вышли из послушания начальства, имея более силы против находящихся в крепости. Персиянам не даются переводить себя в Персию, разойдясь по замкам и между гор в укрепленные места“. Отмечен бунт армян и “татар” селения Мастара против персидских войск. Ситуация в Ереване представлялась относительно стабилизовавшейся, когда жители стали ожидать прибытия русского войска с Цициановым. На этот случай “сделать бунт и резаться между собой, дабы отдать крепость в руки в.с.”.<sup>2</sup>

В тяжелом положении оказалось крестьянское население св. Первопрестола Эчмиадзина, которое, после вывода оказалось в районе Авлабар г. Тифлиса, намеревались переселить в селение Цынцкаро. 14 октября 1805 г. епархиальный архиепископ Иоаннес Гехардакир направил письмо Цицианову с просьбой вновь отдать предписание капитан-исправнику о нежелательности выселения до его прибытия.<sup>3</sup> Продолжено переселение ереванских армян в г. Елисаветполь, для которых Тифлис стал перевалочным пунктом. Люди избегали притеснений и истязаний персидских властей, но и после этого жизнь не становилась слаще.

Всю суть позиции Цицианова в переселенческом вопросе раскрывает его предписание от 10 января 1806 г. ген. Несветаеву, который сообщил о желании 10- тысяч армян с семьями из Баязета переселиться в Ереванскую провинцию. На это главноначальствующий откровенно указал: “Я должен сказать Вашему Превосходительству, что хотя бы область Ереванская была и наша, то мне переселять их туда незачем, а мне нужно заселить Грузию -

---

<sup>1</sup> Там же, N 1260, с.628.

<sup>2</sup> Там же, N 1261, с.629.

<sup>3</sup> ПВА, т.1, N 272, с. 332,333

и для того, если не пожелают перейти на жительство во внутрь Грузии, то мне их почти и не надобно. Ибо поселив их в Ереванской области, трудно будет держать в должном повиновении и они беспрестанно будут бегать или иметь сношения за Араксом“.<sup>1</sup>

### МНЕНИЕ ГОСУДАРСТВЕННОГО СОВЕТА

Сардар Гусейн -Кули хан в 1807 г. поддержал прошения католикоса Даниела перед российскими властями вопрос о возврате армянских переселенцев из Грузии в Ереванскую область, который оказался болезненным. Об этом свидетельствует заседание Государственного Совета 30 декабря 1807 г., где рассматривалось представление главноуправляющего Гудовича “О населении Грузии выходцами соседственных и скипетру неподвластных областей”. Санкционировалось принятие переселенцев на основе закона царя Вахтанга и предоставление крова помещикам Грузии, с узакониванием их за собой. Они же сохраняли свободу при заселении свободных мест. При этом член Государственного Совета генерал от инфантерии Филосовов затребовал учета “озлобления соседей” от последствий вынужденной миграции армянского населения. Им было заявлено: “Хотя полезным и нужным считаю пешся о приумножении жителей мало-населенной Грузии, но чтоб успеть в намерении сем средствами определенными от прежних обладателей оной, чтобы принимать всяких выходцев соседственных земель, не взирая на последствия такого приема и озлобления соседей, сие считаю противным предрекаательным расположениям мудрого и справедливого Государя нашего. И для сего, что таковое из жителей соседственных земель населения Грузии не только не нужно дозволять, но и совсем воспретить по общему правилу, чтобы никогда не делать того другому, что сам не хочешь, чтобы тебе делается было. Чему сообразно определить местному начальству, как военному, так и гражданскому”.<sup>2</sup>

В завуалированной форме поддержку генералу оказал министр иностранных дел Н.П. Румянцев: “Рабство до нас уже существовало, довольно

---

<sup>1</sup> Там же, N 286, с. 343.

<sup>2</sup> Архив Государственного Совета, СПб., 1878, т.3, ч. 1, стлб 821.

и того; - но на рабстве открывать новые способы не принадлежит нашим временам, а еще менее царствованию Александра".<sup>1</sup> Решающей оказалась позиция заместителя министра иностранных дел кн. А.А. Чарторыйского. Им указано на наличие двух категорий переселенцев: 1) оставить в неизменности прибывших и обосновавшихся в Грузию "выходцев", т.е. в зависимости от грузинских помещиков; 2) "принятие и водворение их на будущее время", с применением запрета российского законодательства, "запрещающее помещикам принимать заграничных выходцев".<sup>2</sup>

### ЗАКЛЮЧЕНИЕ

10 февраля 1808 г. вице-канцлеру Куракину было сообщено об утверждении царем Александром I журнала Государственного совета, отдавшему приоритет запрету грузинским помещикам принимать заграничных переселенцев для закрепощения. Монарх и Государственный Совет продолжали политику Екатерины II по заселению приграничной территории армянским населением.<sup>3</sup> Живущим в Тифлис армянам переселенцам из Еревана, Нахичевана, Памбака и других мест, удалившихся от персидского угнетения, и стремившихся вернуться к родному крову, местная администрация не давала разрешения.<sup>4</sup> Ереванские поселенцы братьев Гехамовых, пожелавшие остаться в Тифлисе, были обложены казенной податью 1000 руб. сер.<sup>5</sup>

Таким образом, закавказское продвижение самодержавия России в начале XIX в. сопровождалось значительным и насильственным выселением армянского населения Араратской долины в Грузию военно-политической администрацией региона, особенно из Еревана и его окрестностей. Лишь с 1804 по 1808 г. было выселено по крайней мере 65 тыс. армян. Преследовалась цель закрепления Грузии, достижения стабилизации управления в соответствии с планами по установлению естественных границ

---

<sup>1</sup> Там же, стлб 822.

<sup>2</sup> Там же, стлб.823.

<sup>3</sup> Там же, стлб 823

<sup>4</sup> **Ерицян А.** Материалы для биографии Нерсеса V.Тифлис, 1877,с.56, 57.-На арм. яз.

<sup>5</sup> Архив Государственного Совета ,СПб., т 4, ч. 1, стлб. 486.

в регионе. Вопрос возвращения вынужденных переселенцев был безрезультатно обсужден в Государственном Совете 1808 г. Следствием чего возник процесс деарменизации Араратской страны, который удалось упразднить лишь после Туркманчайского мира 1828 г., когда самодержавие разрешило переселение христиан из Персии в Араратскую долину.

**Վալերի Թունյան Երևանի մարզի հայության վերաբնակեցումը 1804-1808 թթ.** - Ջեղծարար պատմաբանները մեղադրում են Ռուսաստանի ինքնակալությանը, որ արհեստական կերպով Երևանի մարզից ստեղծել է "արհեստածին քրիստոնյա հենակետ", տեղադրել են երկրամասում այլ և օտար էթնիկ խմբեր և ամեն տեղ փնտրում են "աղբբեջանական հողերը": 1804 թ. Երևանի ամրոցի պաշարումը ներկայացվում է, որպես նախագիծ հայկական միջնաբերդի ստեղծմանն ընդդեմ մահմեդական տիրույթներին:

Ռուսաստանի ինքնակալության անդրկովկասյան առաջխաղացումը XIX դ. սկզբում առաջացրեց Արարատյան հովտի հայ բնակչության զգալի վերաբնակեցմանը, հատկապես Երևանի մարզի և հարակից տարածքներից: Միայն 1804-ից 1808 թթ. վերաբնակեցվեց առնվազն 65 հազար հայ: Նպատակն էր կայունացնել իրավիճակը Վրաստանում, կայունացնել կառավարման համակարգը, և ապահովել բնական պայմանների ստեղծումը երկրամասում: Արարատյան հովիտը զաղթածների վերադարձի հարցը քննարկվեց 1808 թ. Ռուսական կայսրության Պետական խորհրդում, սակայն դրական լուծում չստացավ: Արդյունքում տեղի ունեցավ Երևանի մարզի և հարակից տարածքների հայաթափումը: Այդ գործընթացը խաթարվեց 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո, երբ ինքնակալությունը ձեռնարկեց Պարսկաստանի քրիստոնյա բնակչության զաղթը դեպի Արարատյան հովիտը:

**Valery Tunyan. Resettlement of Armenians in the Yerevan region in 1804-1808 years** - Engaged historians accuse Russian autocracy of turning the Yerevan Khanate into an artificial "Christian outpost", of "planting different ethnic components in the region", while they see "Azerbaijani lands" everywhere. The siege of the Fortress of Yerevan in 1804 appears to them to be an attempt of im-

plementing "a plan to create an Armenian buffer as the most important support in the fight against Muslim states."

Meanwhile, after the unsuccessful siege of the Yerevan fortress, the head of Georgia P.D. Tsitsianov, in order to stabilize the situation in Kartli-Kakheti, withdrew 11,000 families (55,500 people) from the Yerevan region, and a year later, another 1,000 families (5,500 people) from Kotayk. In two years, the Yerevan region lost about 65,000 Armenians, which changed the demographic appearance of the Ararat valley.

It was accounted for by political and economic reasons. The ethno-social base of the autocracy in the newly annexed region was expanding, which made it possible to maintain stability in Georgia and undermine the economic foundations of the Yerevan Khanate. The issue of the resettlement of Armenians from Yerevan and its environs was considered at the meeting of the State Council in 1808, but without decision making. As a result, a short-term de-Armenization of the Ararat country took place.

Ուղարկվել է խմբագրություն 08.02.2023թ.

Գրախոսվել է 10.02.2023թ.

Ստորագրվել է տպագրության 17.02.2023թ.



**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ  
ԱՐՎԵՍՏԸ**

**ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ**

**Բանալի բառեր** – Հովհաննես Թումանյան, թարգմանություն, թարգմանաբանություն, թարգմանական աշխատանքի փիլիսոփայություն, թարգմանական աշխատանքի գնահատման չափանիշներ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

**Հովհաննես Թումանյանի թարգմանական ժառանգությունը նրա կերտած լեզվաշխարհի անբաժան մասնիկն է:** Այստեղ ամենից առաջ տեսնում ենք առհասարակ լեզվի գործածության հարցում բանաստեղծի անվերապահ պահանջկոտությունը, թարգմանվելիք նյութի անբասիր ընտրությունը, բնագրի բովանդակության համարժեք վերարտադրության հետևողականությունը: Թարգմանվող գործի և Թումանյան թարգմանչի հոգեհարազատության հանգամանքը արձանագրել է դեռևս **Արսեն Տերտերյանը**. «Յովհ. Թումանեանը պատկանում է բաղդաւոր բացառութիւնների թուին: Այն բոլոր թարգմանութիւնները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպութեամբ՝ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու յոյզերին»<sup>1</sup>:

Դրանում կարող ենք համոզվել Հովհաննես Թումանյանի արած գրեթե բոլոր թարգմանությունների օրինակով, քանի որ բանաստեղծն ինքը նյութն ընտրելիս կողմնորոշվում է որոշակի և, բնականաբար, հոգևոր առումով իրեն հարազատ չափանիշներով: Տարբեր ժողովուրդների **հեքիաթները թարգմանելիս** նա կարողացել է լուծել երկմիասնական բարդ խնդիր. մի կողմից՝ անհրաժեշտ չափով պահպանել բնագրի ազգային երանգավորումը, մյուս կողմից՝ հեքիաթը դարձնել հայ ընթերցողի ընկալմանը համահունչ՝ ոչ միայն լեզվական, այլև հայ ժողովրդական հեքիաթներին բնորոշ

<sup>1</sup> **Արս. Տերտերյան**, Յովհաննես Թումանեան: Հայրենի եզերքի քնարերգուն: Վաղարշապատ, 1911, էջ 8:

մատուցման ձևի առումով: Օրինակ՝ Էրիխ Ռասպելի «Բարոն Մյունխհաուզենի զարմանալի արկածները» հեքիաթում, կարծեք, հայ պապն է հայ թոռներին շուրջը հավաքած զարմանահրաշ քաներ պատմում:

Օտար հեքիաթների հայերենաշունչ ընկալմանն են նպաստում, մասնավորապես՝ անձնանունների հայկականացումը, զուտ հայկական խոսակցական կաղապարների, դիմելաձևերի և հայերեն դարձվածքային արտահայտությունների գործածությունը. օրինակ՝ Գրիմ եղբայրների հեքիաթներում՝ «աչքիս վրա», «թագավորի տղի աչքն էլ հենց ճամփին է լինում», «հողեմ գլուխդ», «ինքը թիզուկես, միրուքը գագուկես», «գետինը մտնեք դուք, գետինը», «կրակի վրա յուղ չեն ածիլ», «էնքան սիրուն, էնքան շարմաղ, որ էլ չուտես, չիմես, կանգնես ու մտիկ անես», «ով որ այբն ասել է, բենն էլ պետք է ասի», «ուրախանում, աշխարհքով մին են լինում». «ակաս-մակաս՝ էդ մոխրով տեղովդ հենց դու էիր պակաս», «ամեն բան սարքին-կարգին», «աչքերս կուլ են գնում», «արմանքից ու զարմանքից քշվում, վերանում են» և այլն:

#### **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Թարգմանաբանությանը** վերաբերող Հովհաննես Թումանյանի դատողությունները մի **ամբողջական հայեցակարգ են**, այսօր էլ մեթոդաբանական արժեք ունեն: Շրջանառում է նրա ամենահայտնի ձևակերպումը՝ տվյալ ազգի լեզվամշակութային կարողականությունը չափելու վերաբերյալ. «Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանն որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է. եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»<sup>1</sup>:

Իսկ քանի որ Շեքսպիրի թատերգությունների թարգմանությունը մշակութային իրողություն է դառնում նաև դրա հրապարակային հնչեցմամբ, ապա հասկանալի է Հովհաննես Թումանյանի խստությունը հաջող թարգմանության անհաջող առարկայացման առիթով. «Ես կարծում եմ ո՛չ հոր եղեռնական մահը, ո՛չ մոր շուտափույթ ամուսնությունը, ո՛չ հորեղ-

<sup>1</sup> **Հովհ. Թումանյան**, «Հավելտ», ողբերգություն Շեքսպիրի // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 53-54:

բոր ազգապիղծ վարմունքը, ո՛չ Օֆելիայի թեթևամտությունը, ո՛չ Պոլոնիոսի պալատական նենգավորությունը, ոչինչ, ոչինչ էնքան վիրավորական չպետք է լինեն դժբախտ Համլետի՝ էն առաջին ինտելիգենտի հոգու ազնվության, արքայազնի վեհության, փիլիսոփայի խորության, հանճարեղ նրբամտության ու վշտի ծանրության համար, որքան հայ դերասանի անճաշակ լավանությունը, վախկոտ հայացքները դես ու դեն, անմիտ վազվզելը պատից պատ, անտեղի աղաղակներն ու լաց ու կոծը կամ ռուս դերասանի հիստերիկ հեկեկոցներն ու հռհռոցները, հիվանդագին գալարումները, անդադար ծամածռությունները ու գոռում գոչումները»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է թարգմանչական աշխատանքին, ապա ոչ պակաս տարածված է նրա մյուս ասույթը. «Թարգմանությունը ապակու տակ դրած մի վարդ է. գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարագատ բույրն ու հրապույրը»<sup>2</sup>:

Այստեղ թվում է (մանավանդ՝ երբ նախադասության միայն առաջին կեսն է հիշատակվում), թե Հովհաննես Թումանյանն առհասարակ կասկածի տակ է առնում որակյալ թարգմանության հնարավորությունը կամ էլ ընդհանրապես անհնարին է համարում: Մինչդեռ կարդանք մտքի անմիջական շարունակությունը. «Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, երբ թարգմանվում է այնպիսի մի երկ, որի ամեն մի խոսքն ու նախադասությունը, չափած ու կշռած, ունեն իրանց խոր նշանակությունն ու հաստատ տեղը»<sup>3</sup>:

Հովհաննես Թումանյանը շատ բարձր է գնահատել Հովհաննես Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունները, հատկապես «Համլետ»-ը: Դրվատանքի է արժանանում հատկապես լեզվական համարժեքության հանգամանքը. «Շեքսպիրի գործին արժանի մի լեզու, անբռնագրոս ու հարուստ... Ի՞նչ արժանավայել ճոխությամբ է խոսում հայոց լեզուն»<sup>4</sup>: Որոշ

<sup>1</sup> **Հովհ. Թումանյան**, «Համլետի» չարչարանքի շաբաթը Թիֆլիսում // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 186–187:

<sup>2</sup> **Հովհ. Թումանյան**, Շեքսպիր. Համլետ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 124:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> **Հովհ. Թումանյան**, Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 462, 463:

հատվածներ այնքան կատարյալ են, «էնքան կորովի ու թափով, որոնց հետ ռուսական լավագույն թարգմանությունները դժվար թե համեմատվեն»<sup>1</sup>: Եվ այնուամենայնիվ, Հովհ. Թումանյանը շարունակ անդրադառնում է եղածին, համեմատում ռուսերեն նոր թարգմանությունների հետ, ձեռք բերում նաև անգլերենը և ստուգում բառարանների օգնությամբ, անում մի շարք ուշագրավ դիտարկումներ, արձանագրում լեզվական և սրբագրական բազմաթիվ սխալներ<sup>2</sup>:

Ընտրելով իրեն հոգեհարազատ, իր կարծիքով հայ ընթերցողի մտքին ու հոգուն պիտանի, հայկական մշակույթը հարստացնող թեմաներ՝ Հովհաննես Թումանյանը լավագույնս առարկայացրել է թարգմանչական աշխատանքի սեփական սկզբունքները ինչպես չափածո (Պուշկին, Լերմոնտով, Հայնե, Բայրոն, Շիլլեր, ռուսական բիլինաներ, սերբական վիպերգ և այլն), այնպես էլ արձակ (Գրիմ եղբայրների, նաև ռուսական, ճապոնական, հնդկական, իտալական, արաբական, իռլանդական հեքիաթներ) երկերի թարգմանության մեջ: Այնպես որ միանգամայն տեղին է հայ մեծ բանաստեղծի գրական ժառանգության այս հատվածի բարձր գնահատականը. հիրավի, այստեղ ևս «Թումանյանը եղել և մնում է անմրցելի, չգերազանցված ողջ հայ թարգմանական գրականության պատմության մեջ»<sup>3</sup>:

Գրականագետների միահամուռ կարծիքով՝ Հովհաննես Թումանյանի թարգմանական գլուխգործոցը Ալեքսանդր Պուշկինի «**Ձմեռվա իրիկունը**» քանաստեղծությունն է: Արժե մեկ անգամ էլ համոզվել դրանում:

Буря мглою небо кроет, Вихри снежные крутя; То, как зверь, она завоет, То заплачет, как дитя, То по кровле обветшало́й	Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գազան.
--	---

<sup>1</sup> Անդ, էջ 461:

<sup>2</sup> Տե՛ս **Հովհ. Թումանյան**, «Համլետ», ողբերգություն Շեքսպիրի, էջ 54–81, Հովհ. Թումանյան, Շեքսպիր. Համլետ, էջ 125–130:

<sup>3</sup> **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի գրական ժառանգությունը, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 109:

<p>Вдруг соломой зашумит, То, как путник запоздалый, К нам в окошко застучит.</p> <p>Наша ветхая лачужка И печальна и темна. Что же ты, моя старушка, Приумолкла у окна? Или бури завываньем Ты, мой друг, утомлена, Или дремлешь под жужжаньем Своего веретена?</p> <p>Выпьем, добрая подружка Бедной юности моей, Выпьем с горя; где же кружка? Сердцу будет веселей.</p> <p>Спой мне песню, как синица Тихо за морем жила; Спой мне песню, как девица За водой поутру шла.</p> <p>Буря мглою небо кроет, Вихри снежные крутя; То, как зверь, она завоет, То заплачет, как дитя. Выпьем, добрая подружка Бедной юности моей, Выпьем с горя: где же кружка? Сердцу будет веселей.</p>	<p>Մին՝ վայրենի սուլում պես- պես, Աղմբկում է տանիքում, Մին՝ ուշացած ճամփորդ, ա- սես, Լուսամուտն է նա թակում:</p> <p>Մեր խորճիթը աղքատ ու հին, Ե՛վ մըթին է, ն՛ տըխուր. – Ի՞նչ ես նըստել պատի տա- կին, Իմ պառավըս, էդպես լուռ: Հոգնե՞լ ես դու փոթորիկի Ոնոցներից խելագար, Թե՞ նիրհում ես քո իլիկի Բըզզոցի տակ միալար:</p> <p>Արի խըմենք, բարի ընկեր Իմ սև, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Միրտներըս բաց կըլինի: Երգի՛ր, ո՞նց էր ապրում խա- ղաղ Հավքը ծովի էն ափին, Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ Ջուրը գնում մինչ արփին:</p> <p>Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լի- նում,</p>
--	--

	Մին՝ ռոնում է գերթ գազան: – Արի խմենք, բարի ընկեր Իմ սև՝, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ Բեր, Միրտներըս բաց կըլինի:
--	---

Սա, հիրավի, լիարժեք թարգմանության դասական օրինակ է: Ձմռան երեկոյի ուրվագծված պատկերը երկու լեզվով էլ առաջացնում է միևնույն զգացողությունը՝ ցուրտ, անհրապույր, վիատեցնող օրվա ավարտ, աղմկոտ հողմապտույտը, ասես, ուր որ է խարխուլ խրճիթը պոկել, տանելու է: Մութ ու տխուր երեկո, սիրտ կեղեքող, թախծալի տրամադրություն: Այո, տխուր է, մութ է, ասում է քնարական հերոսը, բայց ինչո՞ւ տրվենք ձանձրույթին և հուսահատությանը: Մենք երկուսս ենք, մեր հիշողությունները մեզ հետ են, խմենք, երգենք, մեր կյանքի վառ օրերը հիշենք, սիրտներս լայն բացենք: Եվ նման հանգուցալուծման մեջ ընթերցողը (և՛ ռուս, և՛ հայ) զգում է մարդկային փոխադարձ համակրանք ու ջերմություն:

Եթե խոսենք ժամանակակից թարգմանաբանության լեզվով, ապա, անտարակույս, այստեղ ապահովված է նկարագրական համարժեքությունը՝ ստույգ վերարտադրված է բնագրի թե՛ բովանդակությունը, թե՛ ձևն ու ոճը: Ապահովված է նաև թարգմանվող տեքստի գործաբանական (պրագմատիկ) իմաստը, այսինքն՝ բնագրի հեղինակի՝ ընթերցողին որոշակի խոհ հաղորդելու, հուզական տրամադրությամբ համակելու մտադրությունը նույնականորեն առկա է թարգմանվածի մեջ, այլ կերպ ասած՝ ռուսերեն բնագրի ընթերցողի և հայերեն թարգմանության ընթերցողի ընկալումը, ամենայն հավանականությամբ, նույնն է: Ասվածի լույսով՝ լիովին արդարացված են բառային փոխակերպումները. հայերեն ավելի համոզիչ է հենց «սիրտը բացելը», ոչ թե «սրտի ուրախ լինելը»: Մենք գիտենք, որ կարդում ենք Ալեքսանդր Պուշկինի գրածը, այլ կերպ ասած՝ մեր առջև է ռուսական մշակույթի մի պատառիկ, որը, սակայն, մենք ընկալում ենք հարազատորեն, որպես հայկական մշակույթի մաս դարձած իրողություն:

Առհասարակ, գեղարվեստական թարգմանությունը ստեղծագործության տեսակ է՝ առավել դժվարին իրագործելի մանավանդ բանաստեղծ թարգմանչի համար. չէ՞ որ միշտ կա բնագրի հեղինակի ստեղծած պատկերը յուրովի, սեփական ստեղծագործական բնագրին և ճաշակին համապատասխան վերափոխելու գայթակղության վտանգ. նման դեպքերում իր կատարածը թարգմանիչը, սովորաբար, անվանում է «փոխադրություն». այդպես, օրինակ, Հովհաննես Թումանյանն է Միխայիլ Լերմոնտովի «Իդա» բանաստեղծության իր թարգմությունն անվանել: Իսկ որ Ա. Պուշկինի «Ձմեռվա իրիկունը» բնավ էլ պատահաբար չի ընտրվել, այլ, Արսեն Տերտերյանի վերոբերյալ մտքի հաստատումն է, այսինքն՝ Հովհ. Թումանյանի մտքի և հույզի յուրատեսակ թարգմանը, հաստատում է բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը. «Կարդացեք ու տեսեք, – ասել է Թումանյանը, – թե ինչքան է սե՛ղմ, գեղեցի՛կ և ուժեղ. մի ավելորդ բառ չեք գտնի»<sup>1</sup>: Ճիշտ նույն բնութագրումն անվարան կարող ենք գործածել թարգմանվածի համար:

Իհարկե, Հովհաննես Թումանյանի մյուս թարգմանություններն էլ չեն զիջում դիտարկված օրինակին: Բնագրի և թարգմանվածի ևս մի գույզ դիտարկենք. այս անգամ կբավարարվենք Ալեքսանդր Պուշկինի «Ջրահեղձը» բանաստեղծության առաջին տան համեմատությամբ: Եթե առաջին օրինակում համոզվում ենք երկու լեզվով նկարագրված պատկերի լիակատար նույնականության մեջ, ապա այս դեպքում մեզ զարմացնում և հիացնում է ժողովրդախոսակցական մակարդակի լեզվի անթերի նույնական մատուցումը:

Прибежали в избу дети Второпях зовут отца: «Тятя! тятя! наши сети Притащили мертвеца». «Врите, врите, бесенята, – Заворчал на них отец; – Ох, уж эти мне ребята!	Ներս վազեցին մանուկները Ու կանչում են հորն ըշտապ. – Ա՛յի, ա՛յի, ե՛կ, մեր թոռը Մեռել հանեց գետի ափ: – Սուտ եք ասում, շա՛ն լակոտներ, Գոռաց հայրը ահաբեկ.
--	---

<sup>1</sup> Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 138:

Будет вам ужо мертвец!	Ըսպասեցեք դուք հալա դեռ, Մեռելն հետո կըտեսնեք:
------------------------	---

Հաստատ չենք կարող ասել, թե ռուս ընթերցողն ինչպես է ընկալում երեխաներին «սատանա» անվանելը, թեկուզ կատակով, բայց հայերիս համար «շան լակոտ» ասելը իմաստային գուգորդությունների շատ լայն տիրույթ ունի՝ կոպիտ վիրավորանքից մինչև գորովանքի և դրվատանքի արտահայտություն, ուստի թարգմանիչը անվրեպ է գործել. տվյալ իրավիճակում հայրը ոչ այնքան զայրանում, որքան զարմանք, շփոթմունք ու անվստահություն է հայտնում իր չարաճճի զավակների հայտարարությանն ի պատասխան:

Իրեն բնորոշ պահանջկոտությամբ և հստակությամբ կատարելով մի շարք արժեքավոր թարգմանություններ (շուրջ 80 գործ)<sup>1</sup>, Հովհաննես Թումանյանը նաև ձևակերպել է **թարգմանական աշխատանքի փիլիսոփայությունը**. «Ճաշակով ընտրություն, լավ լեզու, խնամքով հրատարակություն: Էս երեք պայմանը պետք է ունենանք»<sup>2</sup>:

Այս երեք հիմնարար պայմանները փաստորեն սեղմ արտահայտում են թարգմանական ստեղծագործության մարմնավորման ընթացքը.

**«Ճաշակով ընտրությունը»** մեկ այլ մշակույթից սեփական լեզվամշակութային իրողություն տեղափոխվելու արժանի և այդ իրողությունը հարստացնելու ունակ գործի ընտրությունն է: Սա, իհարկե, մեծավ մասամբ նախապատրաստական բնույթի համակողմանի աշխատանք է, ինչպես ընդունված է ասել՝ «նախաթարգմանական աշխատանք», որը ենթադրում է և թարգմանչից պահանջում համապատասխան «ֆոնային» կամ «հենքային» գիտելիք<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Հովհաննես Թումանյանի թարգմանական գոհարները», Եր.: Իրավունք, 2008:

<sup>2</sup> **Հովհ. Թումանյան**, Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 460:

<sup>3</sup> Տե՛ս **Ար. Քամայան**, Թարգմանության տեսության հիմունքներ, Եր.: Երևանի պետական համալսարանի հրատ., 2020, էջ 25–30:

Տարօրինակն այն է, որ այս՝ տեսական բարձր մակարդակով և գործնական հարուստ նյութով հանդերձ ուսումնական ձեռնարկում, **ոչ մի հիշատակում չկա Հովհաննես Թումանյանի մասին**՝ ո՛չ նրա կատարած թարգմանությունների, ո՛չ էլ թարգմանաբանական բնույթի դատողությունների մասին: Առավել տարօրինակն այն է, որ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի խորհուրդն է հանգիստ խղճով գիրքը երաշխավորել հրատարակության: Իսկ մի՞թե հայ ապագա բանասերը, թարգմանիչը, լեզվաբանը



«**Լավ լեզուն**»՝ որպես թարգմանական աշխատանքի հանրագումարային բնութագիր, ներառում է երկու լեզուների և մշակույթների քաջ իմացություն, հատկապես սեփական լեզվի հարստությունը (բառապաշարը, շարահյուսական ճկունությունը, բառակազմական դյուրությունը, ժամանակաձևերի առանձնահատկությունները և այլն) գործադրելու հմտություն, նաև տրամաբանորեն շարադրելու կարողություն, բնագրին հնարավորինս հարազատ մնալու և անհարկի միջարկություններից խուսափելու պարտավորվածություն, իմաստային համարժեքություն ապահովելու հմտություն և այլն:

«**Խնամքով հրատարակություն**»՝ խմբագրական, սրբագրական, մեկնաբանական-խորհրդատվական համապատասխան աշխատանք, գրքի որակյալ տպագրություն և գրավիչ մատուցում ընթերցողին:

Կան նաև ածանցյալ պահանջ-պայմաններ.

✓ Թարգմանիչը պետք է ունենա պատասխանատվության զգացում թարգմանվող հեղինակի և նրա գործի հանդեպ, ընդ որում այնքան ավելի մեծ պատասխանատվություն, որքան ավելի նշանակալի է տվյալ գործը իր սեփական մշակութային համակարգում<sup>1</sup>:

✓ Թարգմանիչը պարտավոր է հավատարիմ մնալ բնագրին, այսինքն՝ պիտի հնարավորինս ճիշտ ըմբռնի և հայտնի հեղինակի միտքը, ընդ որում դարձյալ այնքան ավելի հավատարիմ, որքան ինքնին արժեքավոր է տվյալ ստեղծագործությունը<sup>2</sup>:

✓ Ցանկալի է որոշակի ծանոթագրություններ տալ, բացատրելու և մեկնաբանելու ընթերցողի համար բնագրի որոշ մութ, դժվարըմբռնելի հատվածները, առանձին անուններ և դարձվածքային արտահայտություններ ու բառախաղեր<sup>3</sup>:

✓ Անցանկալի է ընթերցողին և քննադատին կանխավ «կաշառելը»՝ տարատեսակ վերապահումներ անելով թարգմանության բարդություններ-

---

առաջին հերթին հենց Թումանյանից չպիտի սկսի թարգմանության այբուբենին ծանոթանալը... Ոմանց էլ, թերևս, հարկ կա հիշեցնելու, որ, այնուամենայնիվ, **հայ թարգմանաբանության հիմնադիրը Հովհաննես Թումանյանն է:**

<sup>1</sup> **Հովհ. Թումանյան**, Շեքսպիր. Համլետ, էջ 124:

<sup>2</sup> Տե՛ս **Հովհ. Թումանյան**, «Համլետ», ողբերգություն Շեքսպիրի, էջ 57:

<sup>3</sup> Անդ, էջ 55:

րի վերաբերյալ և ներողամտություն հայցելով<sup>1</sup>: Թարգմանիչը միշտ պետք է ելնի ընթերցողի՝ անկաշառելիության և պահանջկոտության յուրատեսակ կանխավարկածից. «Մենք, ընթերցողներս, չենք կարող և իրավունք էլ չունենք ներողամիտ լինելու, եթե Շեքսպիրի **փոխադրողը** բնագրից շեղվում է, տալիս է մի համանման բան, այն էլ ոչ այնքան ընտիր»<sup>2</sup>:

✓ Միաժամանակ, թարգմանչական աշխատանքն ինքը կարոտ է լուրջ քննադատության. վերստին՝ որքան արժեքավոր է թարգմանության բնագիրը, այնքան ավելի լուրջ և խոր քննադատության կարիք կա<sup>3</sup>:

«Լուրջ»՝ հանգամանակից, հիմնավոր և բարյացակամ քննադատության օրինակներ Հովհաննես Թումանյանն ինքն է տվել: Այդպիսին է Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի թարգմանությունների մասին նրա հոդվածը<sup>4</sup>: Նախապես գոհունակություն և շնորհակալություն հայտնելով թարգմանչին՝ Վալերի Բրյուսովին, մանավանդ հայ ժողովրդի և հայկական մշակույթի մասին նրա դրվատական նախաբանի և մեկնաբանությունների համար, միաժամանակ Հովհ. Թումանյանը մի քանի դիտողություն է անում «ազնիվ թարգմանչին ու իր աջակիցներին», վստահություն հայտնելով, թե «ավելի զգուշավոր վերաբերմունքով ավելի շատ կարողանան խուսափել ակամա սխալներից»<sup>5</sup>:

Թարգմանական աշխատանքը պիտի գնահատվի նաև համեմատության մեջ, այսինքն՝ երբ միևնույն գործը մի քանիսն են թարգմանում: Վերստին այքի առաջ ունենալով Քուչակի և Սայաթ-Նովայի ռուսերեն մի քանի նախորդ թարգմանությունները՝ Հովհաննես Թումանյանը շատ բարձր է գնահատում է Վ. Բրյուսովի կատարած աշխատանքի որակական առանձնահատկությունը. «...Առաջին անգամն է, որ պ. Բրյուսովը

<sup>1</sup> Անդ, էջ 58:

<sup>2</sup> Անդ, էջ 66:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Քուչակ նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առթիվ // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995:

Այդ «լուրջը» երբեմն արտահայտվում է թումանյանական նշանավոր հումորով: Այսպես, երբ Վ. Բրյուսովը հարցնում է Հովհ. Թումանյանի կարծիքը «Անուշ» պոեմի Վյաչեսլավ Իվանովի թարգմանության մասին, լսում է հետևյալ պատասխանը. «Լավ է, բայց ավստ~ս իմ Անուշը չէ, նրանը շեկ է դուրս եկել» (Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, էջ 138):

<sup>5</sup> Անդ, էջ 198:

թարգմանում է վարպետի ձեռքով՝ աշխատելով հաղթել գրեթե անհաղթելի արգելքների և ինչպես Սայաթ-Նովայի, էնպես էլ Նահապետ Քուչակի երգերը տալ ռուսերեն, խորապես ճանաչելով նրանց մեծությունը և ինքնուրույն շունչն ու երանգը, և նրանց գործերը անվանելով հայ ժողովրդի ազնվականության վկայական»<sup>1</sup>:

Վալերի Բրյուսովն ինքը նշանավոր բանաստեղծ է, և որպես այդպիսին կարող է և իրավունք ունի գնահատելու ուրիշ ազգի մշակութային արժեքները և իր գնահատականով նաև ճիշտ կողմնորոշելու ռուս ընթերցողին: Թարգմանվող գրականությունը լիակատար հիմքով որպես տվյալ ժողովրդի բարձր մշակույթի, ոգեղենության, «ազնվականության վկայական» անվանելը, ըստ Հովհաննես Թումանյանի, թարգմանական աշխատանքի բացառիկ կարևորության գործառույթներից մեկն է, գրական գործերի միջոցով ժողովուրդների հոգեկան կապի հաստատման, միջմշակութային ճանաչման հնարավորության ստեղծումը:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ձևավորելով կայուն զարգացման նպատակով ակտիվների և դրանց ձևավորման աղբյուրների հաշվեկշռային փոխկապվածություն (տես գծապատկեր 2), հնարավորություն կստեղծվի կրկնակի գրանցման ենթարկելու դրանց փոփոխությունները և տեղեկատվական համակարգ կառուցելու հրապարակվող համակցված հաշվետվություններում: Արդյունքում, համակցված հաշվետվությունները ներկայացնելիս կգործի ինտեգրված մտածողությունը և դրանով կբացահայտվի կազմակերպության կողմից արժեքի ստեղծման արդյունքների և դրան նպաստող ներգրավված ռեսուրսների փոփոխության պատճառահետևանքային կապերը, որն էլ իր հերթին կայուն զարգացման ռիսկերի և դրանց կառավարման հնարավորությունների մեկնաբանությունների առիթ կհանդիսանա:



**Գծապատկեր 2.** Կազմակերպության համապարփակ ֆինանսական վիճակի մասին առաջարկվող հաշվետվության կառուցվածքը<sup>1</sup>

Կիրառելով կայուն զարգացմանը հասցեագրվող ռեսուրսների և դրանցից ակնկալվող արդյունքների հաշվեկշռային կապերը, հնարավորություն կստեղծվի կրկնակի գրանցմամբ դրանք փոխկապակցելու և համակարգված ներկայացնելու: Հետևաբար, եթե գործարարության մեջ ներգրավված ռեսուրսները կնպաստեն կազմակերպության կողմից ներ արժեքի ստեղծմանը, ապա կձևակերպվի հաշվապահական թղթակցություն.

***Դո Գործարարության կայուն զարգացմանն ուղղված ակտիվներ***

***Կո Կազմակերպության կայուն զարգացմանը սպասարկող կապիտալ***

Հակառակ պարագայում, վերոնշյալ հաշվապահական թղթակցությունը կհադարձվի, որը կարձանագրի կազմակերպության գործարարության պահանջը կայուն զարգացման գործընթացում:

---


<sup>1</sup> Կազմել են հեղինակները:

**ԻՆՉՊԵՍ ՀԱՇՎԱՌԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴԻՐՉՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Գիտությունը սկսում է այնտեղ,  
որտեղ սկսում են չափել:*

Դ. Մենդելեն

Կազմակերպության համապարփակ ֆինանսական վիճակի մասին առաջարկվող հաշվետվությունը կառուցելիս անհրաժեշտություն է առաջանում գործարարության տեղեկատվական համընդհանուր հոսքերից առանձնացնել տվյալների այն մասը, որն առնչվում է կայուն զարգացմանը: Տնտեսական գործունեության ընթացքում ներգրավելով տարաբնույթ ռեսուրսներ, կազմակերպությունը դրանց ոչ ամբողջական մասն է օգտագործում հանրությանը հետաքրքրող կայուն զարգացման ուղղություններով, այլ ընդհակառակը հասցեագրում է մասնավոր նկատառումներով շահույթի ստացմանը:




**Գծապատկեր 3.** Կայուն զարգացման տեղեկատվական հոսքերի տարանջատումը կազմակերպության տնտեսական գործունեության տեղեկատվության ընդհանուր պարբերաշրջանից<sup>1</sup>

<sup>1</sup> Կազմել են հեղինակները:

Ուստի, ինտեգրված տրամաբանությամբ համակցված հաշվետվություններ ձևավորելիս խնդիր է առաջանում առանձնացնելու այն տեղեկատվական հոսքերը, որոնք առնչվում են կազմակերպության կայուն զարգացմանն ուղղվող ռեսուրսների ներգրավումներին և դրանց օգտագործումից բխող արդյունքներին՝ հանրության տեսանկյունից գնահատելու համար կազմակերպության կողմից ստեղծած արժեքը (տես գծապատկեր 3):

Այս նպատակով առաջարկում ենք կիրառել հատուկ հաշիվներ, որոնք կտարանջատեն և կլիմֆավորեն կայուն զարգացմանը առնչվող տեղեկատվական հոսքերը կազմակերպության տնտեսական շահ հետապնդող գործունեության համընդհանուր տեղեկատվությունից (տես գծապատկեր 4):



- ➔ շահույթ հետապնդող գործունեության տեղեկատվական հոսքեր
- ➔ կայուն զարգացմանը առնչվող տեղեկատվական հոսքեր

**Գծապատկեր 4.** Կայուն զարգացման տեղեկատվական հոսքերի հաշվառման առաջարկվող մեխանիզմը<sup>1</sup>

<sup>1</sup> Կազմել է հեղինակը:

Այսպես, ընդունենք, որ կազմակերպությունը տարեսկզբին որոշում է կայացնում ֆինանսական տարվա ավարտին ներկայացնելու համակցված հաշվետվություն, որտեղ դրամական չափիչներով մեկտեղվելու են առևտրային գործունեությանն ու կայուն զարգացմանը առնչվող տեղեկատվություն: Այս նպատակին հասնելու համար առաջարկում ենք կատարել հետևյալ քայլերը:

**Առաջին քայլ.** ավանդական ֆինանսական իրավիճակի մասին հաշվետվության սկզբնական հոդվածները (տես աղյուսակ 1) համալրվում են գործարարության կայուն զարգացմանն ուղղված ակտիվներով, համապատասխանաբար դրանց ձևավորման աղբյուրները ներկայացնող և կայուն զարգացմանը սպասարկող կապիտալի բաղադրիչներով: Այս ճանապարհով ստացվում է կազմակերպության ֆինանսական իրավիճակի մասին համապարփակ հաշվետվություն (տես աղյուսակ 2):

**Աղյուսակ 1.** Ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվություն (մլն դրամ)

Ակտիվներ	Գումար	Կապիտալ և պարտավորություններ	Գումար
Շենքեր	20	Բաժնետիրական կապիտալ	55
Սարքավորումներ	40	Կուտակված շահույթ	5
Պաշարներ	10	Պարտավորություններ վարկերի գծով	9
Դեբիտորներ	7		
Դրամական միջոցներ	3	Պարտավորություններ գնումների գծով	11
<b>Հաշվեկշիռ</b>	<b>80</b>	<b>Հաշվեկշիռ</b>	<b>80</b>

**Աղյուսակ 2.** Ֆինանսական արդյունքերի մասին տարեսկզբյան համապարփակ  
հաշվետվություն  
(մլն դրամ)

<b>Ակտիվներ</b>	<b>Գու- մար</b>	<b>Կապիտալ և պարտավորություններ</b>	<b>Գու- մար</b>
Շենքեր	20	Ֆինանսական կապիտալ	35
Արտադրական սարքավորումներ	28	Կուտակված շահույթ	5
Օդագտիչ ֆիլտրեր	12	Բնապահպանական կապիտալ	12
Ավանդական պաշարներ	2		
Բնական հումքին փոխարինիչներ	8	Բնօգտագործման կապիտալ	8
Մտավոր սեփականության ակտիվներ	9	Ինտելեկտուալ կապիտալ	9
Աշխատանքային ռեսուրսներ	11	Մարդկային կապիտալ	11
Սոցիալական ակտիվներ	6	Սոցիալական կապիտալ	6
Դեբիտորներ	7	Պարտավորություններ վարկերի գծով	9
Դրամական միջոցներ	3	Պարտավորություններ գնումների գծով	11
<i><b>Հաշվեկշիռ</b></i>	<b>10</b>	<i><b>Հաշվեկշիռ</b></i>	<b>10</b>
	<b>6</b>		<b>6</b>

Եվ ստացվում է այնպես, որ տարեսկզբին ֆինանսական արդյունքերի մասին համապարփակ հաշվետվությունը կառուցվում է կայուն զարգացմանը միտված կապիտալի և ակտիվների վերանայումներով: Մասնավորապես, կազմակերպության տնօրինած սարքավորումները ներկայացված են երկու կտրվածքով՝ արտադրական և բնապահպանական: Նույնը առնչվում է նաև պաշարներին: Բացի այդ, Ֆինանսական արդյուն-



քների մասին համապարփակ հաշվետվությունում արձանագրվել են ակտիվներ (աշխատանքային, սոցիալական, մտավոր), որոնք ֆինանսական հաշվառման շրջանակից դուրս են, սակայն կայուն զարգացման համատեքստում ճանաչելի են կազմակերպության կողմից:

Ֆինանսական արդյունքերի մասին համապարփակ հաշվետվությունը նոր մոտեցում է ցուցաբերում նաև կազմակերպության կապիտալի կազմի առումով: Մասնավորապես, բաժնետիրական կապիտալը վերանայելով ֆինանսական և կայուն զարգացման արդյունքայինության ապահովման կտրվածքով, ինչպես նաև հավելելով ինտելեկտուալ, բնապահպանական, մարդկային, սոցիալական կապիտալի բաղադրիչներ:

**Երկրորդ քայլ.** կրկնակի գրանցամաք արձանագրվում են կազմակերպության կայուն զարգացմանը թիրախավորված ակտիվների, և դրանք ձևավորող կապիտալի բաղադրիչների փոփոխությունները: Ֆինանսական արդյունքերի մասին սկզբնական համապարփակ հաշվետվությունը հիմքեր է ստեղծում տարվա ընթացքում կազմակերպության կողմից նոր արժեքի ձևավորման հաշվառման և տարեվերջյան համակցված հաշվետվության ներկայացման համար, որը կարող ենք ներկայացնել տնտեսական հետևյալ գործառնությունների հաշվապահական արձանագրման օգնությամբ:

1. Կազմակերպության հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների համադրումով ձևակերպվել է գործարարության շահույթը, որը 15 մլն դրամով ավելացրել է դրամական միջոցները.

**Դու Դրամական միջոցներ.....15**  
**Կտ Կուտակված շահույթ.....15**

2. Հաշվետու տարում ստանալով դրամաշնորհ կազմակերպությունը 8 մլն դրամով համալրել է օդամղիչ սարքավորումները.

**Դու Օդագտիչ ֆիլտրեր.....8**  
**Կտ Բնապահպանական կապիտալ.....8**

3. Կազմակերպությունում հաշվետու տարում արձանագրվել է ինտելեկտուալ ակտիվների անկում՝ 4 մլն դրամի.

**Դու Ինտելեկտուալ կապիտալ.....4**  
**Կտ Մտավոր սեփականության ակտիվներ.....4**

4. Հաշվետու տարում կազմակերպությունում 2 մլն դրամով արժեզրկվել է օգտագործվող մարդկային կապիտալը.

*Դու Մարդկային կապիտալ.....2*

*Կու Աշխատանքային ռեսուրսներ.....2*

5. Պետական օժանդակությամբ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք են բերվել բնական հումքին փոխարինիչներ՝ 3 մլն դրամի

*Դու Բնական հումքի փոխարինիչներ.....3*

*Կու Բնօգտագործման կապիտալ.....3*

6. Հաշվետու տարում կազմակերպությունը գործարարության վարկանիշի բարձրացման հաշվին ընդլայնել է սոցիալական կապիտալը, այն ներկայացնելով 6 մլն դրամի վերագնահատված աճով.

*Դու Սոցիալական ակտիվներ.....6*

*Կու Սոցիալական կապիտալ.....6*

Ներկայացված հաշվային թղթակցությունները արձանագրում են այն կապիտալի բաղադրիչների փոփոխությունները, որոնցով ձևավորվում է հաշվետվու ժամանակաշրջանի գործարարության արդյունքում կազմակերպության կողմից ստեղծվող հանրային արժեքը: Գործնականում այդ թղթակցությունների օգնությամբ հնարավորություն է ստեղծվում ներկայացնելու կազմակերպության կողմից հրատարակվող ֆինանսական արդյունքերի մասին համապարփակ հաշվետվություն:

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ֆինանսական արդյունքերի մասին մեր կողմից առաջարկվող համապարփակ հաշվետվության ներկայացման արդյունքում հնարավորություն է ստեղծվում տարեվերջին բացահայտելու կազմակերպության կայուն զարգացմանը առնչվող ռիսկերը, դրանց մեղմման հնարավորությունները, ինչպես նաև կառավարման կիրառվող համակարգի բարելավման ուղղությունները:

**Աղյուսակ 3.** Ֆինանսական արդյունքների մասին տարեվերջյան  
համապարփակ հաշվետվություն  
(մլն դրամ)

Ակտիվներ	Գումար		Կապիտալ և պարտավորություններ	Գումար	
	սկ	վն		սկ	վն
Շենքեր	20	20	Ֆինանսական կապիտալ	35	35
Արտադրական սարքավորումներ	28	28	Կուտակված շահույթ	5	20
Օդագտիչ ֆիլտրեր	12	20	Բնապահպանական կապիտալ	12	20
Ավանդական պաշարներ	2	2			
Բնական հումքին փոխարինիչներ	8	11	Բնօգտագործման կապիտալ	8	11
Մտավոր սեփականության ակտիվներ	9	5	Ինտելեկտուալ կապիտալ	9	5
Աշխատանքային ռեսուրսներ	11	9	Մարդկային կապիտալ	11	9
Սոցիալական ակտիվներ	6	12	Սոցիալական կապիտալ	6	12
Դեբիտորներ	7	7	Պարտավորություններ վարկերի գծով	9	9
Դրամական միջոցներ	3	18	Պարտավորություններ գնումների գծով	11	11
<b>Հաշվեկշիռ</b>	<b>106</b>	<b>112</b>	<b>Հաշվեկշիռ</b>	<b>106</b>	<b>112</b>

Այսպես, ֆինանսական արդյունքների մասին համապարփակ սկզբնական հաշվետվությունում գրանցելով տարվա ընթացքում վերոնշյալ հաշվային թղթակցությունների արդյունքները, ստացվում է տարեվերջյան հաշվետվությունը (տես աղյուսակ 3), որտեղ և համեմատական դաշտ է ստեղծվում կայուն զարգացման ռեսուրսային փոփոխությունները:

րի միջև՝ ըստ կապիտալի համապատասխան բաղադրիչների: Մասնավորապես, հրապարակված համակցված հաշվետվության օգտատերերին ներկայացվում են բացահայտումներ, թե ի՞նչ գործոնների հաշվին են նվազել մարդկային և ինտելեկտուալ կապիտալները, որո՞նք են այն հնարավորությունները, որոնց կիրառման պարագայում կազմակերպությունը միջնաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով կմեծացնի իր կարողությունները որակյալ աշխատուժի ներգրավման և մտավոր սեփականության ակտիվների ընդլայնման համար: Ընդ որում, այս պարագայում տրվում են և քանակական, և որակական գնահատումներ նաև կազմակերպության արժեքի առումով կատարելով սցենարային վերլուծություններ: Մեր օրինակում կազմակերպությունը կարող է ներկայացնել մարդկային կապիտալի և ինտելեկտուալ կապիտալի համալրման հնարավորություններ, նպատակադրվելով կատարելու սեփական ռեսուրսների ծախսեր: Այս դեպքում արդեն, կարիք կլինի կազմելու և հրատարակելու նաև ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի համապարփակ հաշվետվություններ, որոնք հնարավորություն կտան իրականացնելու սցենարային վերլուծություններ և ֆինանսական ռիսկերի գնահատումներ կարճաժամկետ ու երկարաժամկետ կտրվածքով:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Համակցված հրապարակվող հաշվետվությունները մոտ ապագայում ձևավորվելու և հրապարակվելու են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներով (IFRS-S), որտեղ հստակ ներկայացվելու են, թե ի՞նչ բացահայտումներ են արվելու կազմակերպությունների կայուն զարգացման ուղղությամբ: Բնականաբար, այս ոլորտում խնդիր է առաջանալու, թե ինչպե՞ս չափել և հաշվառել կայուն զարգացման արդյունքները և դրանց ձևավորմանը օժանդակող ռեսուրսները, որոնք հաջորդիվ հիմք են հանդիսանալու հաշվետվական հետագա բացահայտումների համար: Իհարկե, կայուն զարգացմանը առնչվող բացահայտումները կարող են հրապարակվող հաշվետվություններում կրել ընդամենը նկարագրական բնույթ, առանց համակարգված քանակական վերլուծությունների:

Սակայն կարծում ենք, որ ի վերջո հաշվապահական հաշվառման միջազգային մեթոդաբանություն պետք է ձևավորվի՝ համակցելու համար գործարարության ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ներկայացնելու կայուն զարգացման ռեսուրսների գնահատման և հաշվետվողականության միասնական մոտեցումների շրջանակ ու գործիքակազմ ոչ միայն բացահայտումների գծով, այլև ESG հայեցակարգին ուղղված վերաարժևորված այլընտրանքային տեղեկատվական համակարգման գծով: Այն իր հերթին կնպաստի ինտեգրված մտածողության հենքով կայուն զարգացման արդյունքների համակարգային վերլուծությանը և ռիսկերի մեղմմանն ուղղված արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը:

**Армен Джугурян, Геворг Мартиросян, Методологические проблемы интегрированной бизнес-отчетности** - В ближайшее время будут сформированы и опубликованы комбинированные публикуемые отчеты согласно требованиям международных стандартов бухгалтерского учета (МСФО-С), где будет наглядно представлено, какие выводы будут сделаны в направлении устойчивого развития организаций. Естественно, проблема в этой области будет заключаться в том, как измерить и учесть результаты устойчивого развития и ресурсы, обеспечивающие их формирование, которые затем станут основой для дальнейших отчетных выводов. Конечно, выводы, касающиеся устойчивого развития в опубликованных отчетах, могут носить описательный характер без систематического количественного анализа.

**Armen Tshughuryan, Gevorg Martirosyan, Methodological challenges of integrated business reporting** - In the near future, the combined published reports will be formed and published according to the requirements of international accounting standards (IFRS-S), where it will be clearly presented what findings will be made in the direction of the sustainable development of organizations. Naturally, the problem in this area will be how to measure and account for the results of sustainable development and the resources supporting their formation, which will then be the basis for further reporting findings. Of

course, findings related to sustainable development in published reports may be descriptive in nature, without systematic quantitative analysis.

Ուղարկվել է խմբագրություն 19.03.2023թ.

Գրախոսվել է 23.03.2023թ.

Մտորագրվել է տպագրության 27.03.2023թ.

DOI: <https://doi.org/10.59630/25792644-2023.1.24-87>

**ԳԱԶԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ**

**ԳԱՐԻՎ ՔԵՌՅԱՆ**

Եվրամիությունը լի է վճռականությամբ հրաժարվել ռուսական էներգառեսուրսներից, քանի որ կարծում է, որ Վլադիմիր Պուտինը դրանք դարձրել է Եվրոպայի դեմ տնտեսական պատերազմի գործիք: Դա հեշտ չէ և թանկ է: ԵՄ-ն նոր ծրագրեր է կազմում գազային շրջափակման պայմաններում գոյատևելու և գումարներ է փնտրում բնակչության և բիզնեսի աջակցության համար: Ամենաընդգրկուն էներգետիկ ճգնաժամն արդեն աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսությանն արժեցել ավելի քան կես տրիլիոն եվրո: Ձմռանը եղավ մի պահ, որ գազի գինը 10 անգամ գերազանցեց նախորդ տարվա ցուցանիշը: Գազարումը "անջատել է" Հյուսիսային հոսք" հիմնական խողովակաշարը, սկզբում պրոֆիլակտիկայի նպատակով, իսկ հետո նրա երկու ճյուղերն էլ պայթեցվեցին:

Մեղավորը Պուտինն է, վստահ է ԵՄ ղեկավարությունը: Բրյուսելում համոզված են, որ Ռուսաստանն ակտիվորեն շահարկում է էներգետիկ շուկան: Սակայն որքան էլ, որ բարձրագույն ճառեր հնչեն ապագայի, ազատությունների և արժեքների մասին, ԵՄ երկրների 450 միլիոն քաղաքացիներին հետաքրքրում է իրենց բարեկեցությունն ու կենցաղը, որից երբեք չեն հրաժարվի: Գերմանիայի և նյուս եվրապական մեծ պետությունների իշխանությունների էներգետիկ քաղաքականության դեմ արդեն հզոր բողոքի ցույցեր են տեղի ունեցել սկսած 2022 թվականի սեպտեմբերից:

Եվրոպան սկսել է պատրաստվել ամբողջական գազային շրջափակմանը եւ արտակարգ պլաններ մշակել այն մասին, թե, ինչպես գոյատևել առանց ռուսական էներգակիրների:

Մինչ Ուկրաինա ներխուժելը Ռուսաստանը դեպի Եվրոպա էներգառեսուրսների հիմնական մատակարարն էր: Ռուսական նավթը, նավթամթերքները, գազն ու ածուխը ծածկել են եվրոպական սպառման գրեթե 25 տոկոսը, ընդ որում գազի բաժինը հատկապես բարձր է եղել՝ մինչև 40 տոկոս: Այժմ Նորվեգիան ԵՄ-ին ավելի շատ գազ է մատակարարում, քան Ռուսաստանը, "Գազպրոմի" մասնաբաժինը եվրոպական շուկայում 40 տոկոսից նվազել է մինչև 9 տոկոս: Բրյուսելում համոզված են, որ Պուտինը կպարտվի, իսկ Ուկրաինան ու Եվրոպան կշահեն: Փորձագետների մի մասը կարծում է, որ Պուտինի դեմ լինելու է պյուտոյան հաղթանակ: Ձմռանը առանց հովհարային անջատումների ապրելու համար թանկ վճարեցին բոլորը: Եվրոգոտու 19 երկրներ այս տարի լրացուցիչ միլիոններ ծախսեցին գազի գնման համար, ինչը նրանց զրկեց ավելի քան 2 տոկոս տնտեսական աճից, հաշվել են Bloomberg-ի տնտեսագետները: Մասամբ այդ հաշիվը վճարում են բնակչությունն ու բիզնեսը: Սպասվում են զանգվածային սնանկություններ ու սոցիալական ընդվզումներ: Դրա համար էլ իշխանությունները միջամտեցին սուբսիդիաներով, այսինքն՝ փոխհատուցեցին բիզնեսի և բնակչության կորուստները, բայց հարկատուների գումարներից, որն ավելացնում է կառավարությունների պարտքերը: ԵՄ-ում էներգակիրների դեմ պայքարի բյուջետային ծախսերն արդեն գերազանցել են մոտ երեք ու կես մլրդ եվրոն: Միությունը լքած Մեծ Բրիտանիան հետ չի մնում և օրերս հաստատել է պետական աջակցության աննախադեպ ծրագիրը, որն առաջիկա երկու տարում կարժենա առնվազն 150 մլրդ ֆունտ:

Ռուսական էներգառեսուրսներից կախվածությունը քաղաքական առումով մեզ շատ ու շատ թանկ է նստում, ասել է ԵՄ կառավարության ղեկավար ֆոն դեր Լյաենը: Եվրոպայի ղեկավարները նախընտրում են ապրել ավելի աղքատ, բայց ձերբազատվել այդ կախվածությունից: Իհարկե մեծ հույս կա Ռուսաստանին փոխարինել ավելի հուսալի մատակարարներով, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Նորվեգիան, Ալժիրը և այլն :



Պուտինը նույնպես ձեռքերը ծալած չի նստել: Օրինակ նա տապալեց ռուսական էներգակիրների գների առավելագույն մակարդակի սահմանման որոշումը: Հենց որ ֆոն դեր Լյաենը հնչեցրեց այդ գաղափարը, Պուտինը Ռուսաստանից էներգառեսուրսներ գնելու առաջարկը անվանեց "բացարձակ բութ որոշում" և սպառնաց ի պատասխան անջատել գազն ու մնացած ամեն ինչ: Նա ասաց, որ ընդհանրապես ոչինչ չենք մատակարարելու, ոչ նավթ, ոչ ածուխ, ոչ վառելիքային մագուր, ոչ մի բան, եթե դա հակասում է մեր տնտեսական շահերին և հերթական անգամ կրկնեց, որ վստահ է, որ Եվրոպայի այլևս տեղ չունի գնալու: "Նրանք, ովքեր մեզ ինչ-որ բան են պարտադրում, այն վիճակում չեն, որ այսօր մեզ թելադրում են իրենց կամքը: Թող մտածեն", - ասաց նա: Արդյունքում էներգակիրների գների առավելագույն չափի մտցնելու առաջարկին դեմ են արտահայտվել ոչ միայն ռուսական մատակարարումներից կախված Հունգարիան, Սլովակիան և Ավստրիան, այլև Գերմանիան, Նիդեռլանդներն ու Դանիան:

Ինչպես տեսնում ենք, հզոր և հարուստ Եվրոպայի հրաժարվելով ռուսական էներգակիրներից չտեսնված և չլսված միլարդներ է ծախսում, որի հետևանքները դեռ հետո են երևալու: Էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացիան տարիների գործընթաց է և հսկայական ռեսուրսներ է պահանջում, իսկ սոցիալական բողոքի արձագանքները, քաղաքական հետևանքները շաբաթների և օրերի ընթացքում իրենց զգացնել են տալիս: ԵՄ օրինակը մեզ ստիպում է յոթը չափել, նոր մեկը ձևել:

Հայաստանում այս թեմայի հետ կապված կարևոր է իմանալ նաև, որ գազը ստիպում է նաև գլխիվայր շրջված պատկերացումներ ունենալ ժողովրդավարության մասին: Ուկրաինական պատերազմը հավաքական Արևմուտքը մատուցում է որպես ավտորիտար ռուսական բռնապետության դեմ պայքար ազատ աշխարհի ժողովրդավարական արժեքների փրկության համար: Այն, որ ՌԴ քաղաքական համակարգը և նախագահ Պուտինի ավտորիտար կառավարումը չեն համապատասխանում արևմտյան տիպի ժողովրդավարական պատկերացումներին, դա արդեն արևմտյան բոլոր քաղաքական և վերլուծական կենտրոններում բավականին երկար տարիներ ասվում և գրվում է օրական 24 ժամյա ռեժիմով: Այս

մասին գրելն ու քննարկելն անգամ դարձել է անհետաքրքիր և անօգտակար գործ, հատկապես, որ դրա մասին մարդիկ հոգնել են և լսել, և ընթերցել: Սակայն Հայաստանում, թուրքական արքանների մեջ հայտնված քաղաքացիներին, հիմա ավելի շատ անհանգստացնում է, ոչ թե ժողովրդավարության ապագան, այլ իրենց գոյապահպանությունը: Ահա թե ինչու մեզ մոտ բավականին ցավազին է ընդունվում հանուն գազի և տնտեսական օգուտների արևմտյան ժողովրդավարությունների և ավտորիտար ադրբեջանական սուլթանատի ջերմ հարաբերությունները:

Ռուսական գազին այլընտրանք գտնելու համար Եվրամիության ներկայացուցիչները հասան ավտորիտար ռեժիմ ունեցող Ադրբեջան, կնքեցին համագործակցության պայմանագիր և Ալիևին հռչակեցին բարեկամ: Եվրահանձնաժողովի նախագահը Բաքվին անվանում է հուսալի և առանցքային գործընկեր, սակայն նույնիսկ ադրբեջանական ընդդիմությունը դա դավաճանություն է համարում: Ադրբեջանը կարող է բավարարել եվրոպացի սպառողների էներգետիկ նվազագույն պահանջները, փոխարենը Իլհամ Ալիևի հետ նման պայմանագրերն աշխատում են նրա իշխանության ամրապնդման համար: Ստացվում է, որ ժողովրդավար եվրաբյուրոկրատիան ամրապնդում է ավտորիտար սուլթանատները:

Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա Ֆոն դեր Լյաենը Բաքվում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպման ժամանակ լայն ժպտում էր, սեղմելով Ալիևի ձեռքն այն բանից հետո, երբ նրանք պայմանավորվեցին առաջիկա հինգ տարիների ընթացքում կրկնապատկել Ադրբեջանից գազի ներկրումը: Ֆոն դեր Լյաենի գնահատմամբ դա պետք է օգնի փոխհատուցել ռուսական գազի մատակարարումների կրճատումը: Փաստաթղթի ստորագրումից քիչ առաջ Եվրահանձնաժողովի ղեկավարը "Թվիթերում" գրել էր, որ ԵՄ-ն այժմ "դիմում է էներգակիրների ավելի հուսալի մատակարարներին" և Ադրբեջանին անվանեց "առանցքային գործընկեր":

Չեմ կարող ասել որքան էին անկեղծ, բայց 50 ֆրանսիացի քաղաքական գործիչներ ուղերձ են ստորագրել, որում հայտարարել են, որ ընտրելով Ադրբեջանը, Եվրոպան թուլացնում է իրեն և ուժեղացնում Իլհամ Ալիևի բռնապետությունը: Անգամ Ադրբեջանում քաղաքացիական ակտի-

վիստները իրենց հրապարակային ելույթներում նշում էին, որ Եվրոպան անտեսում է մարդու իրավունքների խախտումները Ադրբեջանում: Եվրամիության պաշտոնյաներին Ադրբեջան այցերի ժամանակ չէր խանգարի հաշվի առնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքը: Այն փաստը, որ ֆոն դեր Լյանենը շփվել է միայն երկրի ղեկավարության հետ, դիտարկվում է որպես "Եվրամիության արժեքներից հրաժարում" գազի դիմաց:

Հատկանշական է, որ Ուրսուլա ֆոն դեր Լյանենը երբեք չի մեկնաբանել Թուրքիայում և Ադրբեջանում մարդու իրավունքների խախտումները: Ընդ որում, Ադրբեջանում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը քննադատում էին եվրոպական այլ քաղաքական գործիչներ, այդ թվում՝ Գերմանական Բունդեսթագի պատգամավորները: Անցած տարվա սեպտեմբերի վերջին Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի և Սլովակիայի գազատարների օպերատորները հայտարարեցին, որ պատրաստ են օգնել կարգավորել ադրբեջանական գազի արագ և էժան մատակարարումները ԵՄ: Այդ ժամանակ Հունաստան-Բուլղարիա գազատարի բացմանը նվիրված հանդիպման ժամանակ իր հասցեին քննադատությունն անտեսած Ուրսուլա ֆոն դեր Լյանենը նորից խոսում էր „ավելի հուսալի գործընկերների,, մասին և հրճվանքով մատնացույց անում նույն դահլիճում նստած Ալիևին: Մենք հասկանում ենք, որ Եվրոպան գազի կարիք ունի, սակայն Եվրոպայի էներգետիկ անվտանգությունը չպետք է իրականացվի մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարման և Արցախում հայերի էթնիկ զտման հաշվին:

Հետազոտողները կարծում են, որ Եվրոպային երբեք իրականում չի հետաքրքրել, թե արդյոք կա ժողովրդավարություն գազ արտահանող երկրներում: Իհարկե, կուլուարներում եղել են եվրոպացի պաշտոնյաների հայտարարություններ և հանդիպումներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, բայց այդ հանդիպումներն ու հայտարարությունները երբեք մեծ ազդեցություն չեն ունեցել տիրող իրավիճակի վրա: Փոխարենը, դրանք ավելի շատ նման էին տուժած քաղաքացիական հասարակությանը աջակցություն հայտնելուն: Ադրբեջանը շատ հեռու է Եվրոպայից իր արժեհամակարգով, բայց Ադրբեջանի բնական պա-

շարժերն ավելի մեծ նշանակություն ունեն, քան ժողովրդավարական ճակատում նրա ունեցած հակառեռեկորդը: Չնայած Ադրբեջանում մարդու իրավունքների հետ կապված հսկայական խնդիրներին, Եվրամիությունը հիմնականում չեզոքություն է պահպանում ամենասուր հարցերում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարցում, որովհետև երբեք էլ որևէ քայլ չարեց ինքնորոշմանն աջակցելու ուղղությամբ, սահմանափակվելով կոչերով և հայտարարություններով: Մինչդեռ Ադրբեջանը կոռուպցիայի ընկալման ինդեքսում զբաղեցնում է 128-րդ տեղը 180-ից, մինչդեռ նախագահ Իլհամ Ալիևի ընտանիքը Եվրոպայում ակտիվներ ունի և միջոցների պակաս չի զգում:

Իրավապաշտպանների տվյալներով Ադրբեջանում հարյուրավոր քաղբանտարկյալներ կան, որոնց թվում են ակտիվիստներ, քաղաքական գործիչներ և լրագրողներ: Ինչպես նշում են իրավապաշտպանները, Ադրբեջանի իշխանությունները տարիներ շարունակ աշխատում են ռեժիմի քննադատներին երկիր վերադարձնելու և նստեցնելու ուղղությամբ: Նախագահ Իլհամ Ալիևը երկրում ոչնչացրել է բազմակարծության ցանկացած նմանություն և անխնա փորձում է լռեցնել մնացած քննադատներին: Մամուլի ազատության վարկանիշում երկիրը 154-րդ տեղում է՝ Ռուսաստանի և Բելառուսի միջև: Ադմկահարույց գործ է դարձել Վրաստան մեկնած հետաքննող լրագրող Աֆղան Մուխթարլիի առևանգումը, որին բռնի ուժով բերել են Ադրբեջան և անմիջապես բանտարկել սահմանն ապօրինի հատելու համար: Ադրբեջանը նավթից ու գազից բացի հայտնի է նաև իր քաղբանտարկյալներով:

2013 թվականին Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄՎ) չընդունեց Ադրբեջանում քաղբանտարկյալների վերաբերյալ կոչոտ բանաձևը՝ փոխարենը ընդունելով դրա "մեղմացված տարբերակը": Հետագա հետաքննության շնորհիվ պարզվել է, որ Ադրբեջանը համակարգված կաշառել է եվրոպացի պատգամավորներին, որպեսզի նրանք ավելորդ անգամ չխոսեն երկրում մարդու իրավունքների մասին: Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների վրա այդ կերպ ազդելու Բաքվի փորձերը որակեցին "խավիարային դիվանագիտություն": Երբ Ադրբեջանն ամեն տարի իր մոտ էր հրավիրում ԵԽՄՎ տասնյակ պատ-

գամավորների, խորհրդարանականներին թանկարժեք գորգեր և խավիար էին նվիրում: Արդյունքում վեհաժողովի 13 պատգամավորներ զրկվել են մանդատներից սկանդալի պատճառով :

Կաշառքի քաղաքականությունը ցույց է տվել Եվրոպական ժողովրդավարությունների թույլ կողմերը: Գրեթե 10 տարի առաջ ԵԽՄՎ-ում չընդունված բանաձեւը հնարավորություն տվեց Ադրբեջանի իշխող վարչակարգին ուժեղացնել բռնաճնշումները, որոնք մեկ տարի անց դարձան ամենահայտնի իրավապաշտպանների եւ լրագրողների ձերբակալությունները և ՀԿ-ների աշխատանքի սահմանափակումները: Երբ առանցքային եվրոպական ինստիտուտը չընդունեց մի փաստաթուղթ, որը կարող էր պաշտպանել նրանց իրավունքները, ովքեր հետագայում ձերբակալվեցին և դատապարտվեցին երկարատև ազատազրկման, միանգամայն պարզ դարձավ, թե որքան քիչ է Եվրոպան մտածում Ադրբեջանի Ժողովրդավարական վերածննդի հեռանկարների մասին և որքան արժեքավոր է գազը ժողովրդավարության համեմատ:

Ուրսուլա ֆոն դեր Լյաենի հետ Իլհամ Ալիևի ներկայիս պայմանագիրը եվրոպացիների կողմից հռչակված ժողովրդավարական արժեքների գրեթե դավաճանություն է: Ադրբեջանի հետ հարաբերություններում Եվրոպան առանձնացնում է էներգետիկական ժողովրդավարությունից: Ադրբեջանը միակ բռնապետական ռեժիմը չէ, որին ԵՄ-ն դիմել է հանաձո գազի այլընտրանքային մատակարարումների համար Ուկրաինա ռուսական ներխուժումից հետո, կան նաև Մաուրյան Արաբիա և Քաթար, երկրներ, որտեղ ժողովրդավարության հետ ամեն ինչ նույնպես այդքան էլ լավ չէ: Քաղաքագիտական հետազոտություններն արդեն ցույց են տվել, որ նավթով և գազով հարուստ երկրներում ժողովրդավարությունը զգալիորեն խաթարվել է, իսկ արդյունահանող ճյուղերից դրամական միջոցների ներհոսքը թույլ ժողովրդավարություններին և ավտորիտար պետություններին դրդում է հետագա բռնաճնշումների: Եվրահանձնաժողովի և ԵՄ կառավարությունների համար ավելի կարևոր է ցույց տալ իրենց ընտրողներին, որ նրանք փորձում են մեղմել էներգետիկ ճգնաժամը, մինչև նույն ժամանակ թաքցնելով հետևանքները մարդու իրավունքների համար:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ԶՈՐԱՎԱՐ ՍԵՊՈՒՀԻ ՀՈՒՇԵՐԻՑ

#### ԳԼՈՒԽ Է

Զօր. Անդրանիկ եւ Վարդան Շահպազ – Անդրանիկի գալստեան եօթներորդ օրը – Իլիճան կ'իյնայ յանկարծ – Անդրանիկի անխելք գրոհը – Մեծ կորուստներ մեր կողմէ – Սպայ Արամայիս եւս զոհ կ'երթայ – Կարնոյ թնդանօթները կը գործեն ողբալիօրէն – Մուրատի եւ գնդ. Թորգոմի յաջողութիւնները – Խորհրդածութիւններ – Սմբատ Պիթլիսի վրայ կը ծրագրէ յարձակիլ – Միրոյեան ծլկաւ:

Արդէն վեցերորդ օրն էր որ Զօր. Անդրանի Էրզում կը մնար եւ ոչ ոք գիտէր թէ ինչ կ'ընէր եւ ի՛նչ կը ծրագրէր: Հիւանդ՝ անկողնիս մէջ կը հետաքրքրուէի ճակատով եւ Վարդան Շահպազը դրկեցի Անդրանիկի մօտ՝ լսելու օրուան նորութիւնները: Վարդան Շահպազ ատելով կ'ատէր ներկայանալ Անդրանիկին որովհետեւ այս վերջինը բնաւ կարելորութիւ չէր ընծայէր այս հին ռազմիկին: Այսուհանդերձ Վարդան Շահպազ զիջեցաւ իմ թախանձանքներուն եւ գնաց:

Երբ ներկայացեր էր անոր, սեղանը ըստ սովորութեան զարդարուած էր: Փաշան հրամայական ձեւով եւ հոս չլսուելիք ձեւով մը ըսած էր.

- ... Ի՞նչ ես կանգներ դիմացս, ի՞նչ կ'ուզես:

- Գնա՛, գնա՛, ըսէ՛ որ հանգիստ պառկի, ամէն ինչ լաւ է:

Վարդան Շահպազ այս պարագան հաղորդելով ինձ հեռացաւ: Քիչ ետք Մուրատ եկաւ մօտս եւ յայտնեց որ 600 կամաւորներ, Հաճի Գէվոյի գլխաւորութեամբ, եկան Կարին եւ Զօր. Անդրանիկի դրան առջեւ լսեցին Անդրանիկի ճառը:

Եւ լուսցաւ Զօր. Անդրանիկի գալստեան եօթներորդ օրը, օր մը, որ ճակատագրական նշանակութիւն ունեցաւ մեզ համար: Առտուն լուսաբացին թշնամին յարձակած էր Իլիճայի վրայ յանկարծօրէն եւ գրաւած էր զայն: Հայ զօրքը քաշուած էր Կէզ: Անդրանիկ, լսելով այս լուրը, կը հաւաքէ քաղաքի զինուորները կէսօրի ատեն, որպէսզի հակադարձակու-

մով վերագրաւ Իլիճան, եւ կը մեկնի ճակատ: Իսկ ես հիւանդ պառկած՝ բնա՛ւր տեղեկութիւն չունէի անցքերէն:

Յանկարծ սենեակս մտաւ Կարնեցի դեղագործ եւ բժիշկի օգնական Նշան Փալանճեան եւ յայտնեց Իլիճայի դժբախտ պարտութիւնը: Այլեւս չկրցայ ինքզինքս գսպել, հազայ վերարկուս, հրամայեցի սեւ Միսաքին պատրաստել եւ դրան առջեւ բերել նժոյգս՝ Սեմէտ խանը: Երբ քիչ ետք ձիուս վրայ կը նստէի, Տոքթ. Զաւրիէվ հասաւ եւ կ'ուզէր բռնի վրայ իջեցնել զիս ձիէն: Տաքութիւնս 40 աստիճան էր: Իլիճայի անկումը այնպիսի վատ ազդեցութիւն թողած էր վրաս, որ ձիս մտրակեցի, մէկդի թողելով բժիշկը, եւ քշեցի Երզնկայի դրան ճամբով դէպի Կեդ:

Եւ ի՞նչ տեսնեմ ճանապարհին. ո՛չ մի զինուորական պատշաճ կարգադրութիւն չկար: Առանց ծրագրի, առանց խորհելու, Զօր. Անդրանիկ իր զինուորները ոչխարի հօտի նման կը քշէր խճուղիէն դէպի առաջ: Այն ինչ ես կը կարծէի թէ Անդրանիկ գաղտնի ճանապարհով եւ զանազան ուղղութեամբ իր զօրքերը դուրս կը հանէր քաղաքէն, եւ ռազմավարական շարժումներով պիտի յառաջանար արդէն երեւցող թշնամի բանակին դէմ:

Զիս քշեցի, հասայ իրեն եւ դիտել տուի որ զինուորական մեծ սխալ մը կը գործէ: Զօր. Անդրանիկ, առանց ուշադիր ըլլալու իմ դիտողութեան, եւ պէտք է ըսեմ, սուրը քաշած՝ զինուորներու ետեւէն, կը գոռար կը գոչէր եւ յիշոցներ կ'արձակէր հօտի վերածած զինուորներուն եւ կը քշէր զանոնք դէպի սպանդանոց: Հասարակ, պարզ զինուորն ու կամատորը կ'ըմբռնէին թէ կատարուածը աղաղակող մեծ զինուորական սխալ մըն էր: Հէք զինուորները, որոնց քաջութիւնը կասկածէ վեր է, ակամայ ենթարկուեցան իրենց հրամանատարի սխալին եւ յառաջանալով մօտեցան թշնամի կրակի հասողութեան:

Խորամանկ եւ վարպետ թշնամին, նկատելով որ հայ զօրքի գլուխ կանգնող հրամանատարը կամ հարբած է եւ կամ զինուորական տարրական հասկացողութիւն չունի, թոյլ տուաւ որ հայ զօրքը աւելի եւս մօտենայ: Եւ յանկարծ թնդանօթներով, գնդացիներով կրակ բացաւ ճանապարհէն խիտ բազմութեամբ առաջացող մեր զօրքին վրայ: Քանի մը ըրոպէի մէջ աշնան տերեւներու պէս հարիւրաւորներ թափուեցան գե-

տին՝ թուրք գնդակներէն, իսկ մնացեալները սարսափահար խուճապով քաշուեցան ցանցերու ետեւի խրամատները:

Հոս պէտք է ըսեմ, որ կարսեցի սպայ Արամայիսը դիտել տուած էր Անդրանիկին.

- Փաշա՛, այս մեծ սխալ է որ կը գործէք, ափսոսացէ՛ք մեզ, երեխայի տէր ենք եւ հայրական պարտականութիւն ունինք կատարելու, այս ձեռով չէ որ մեզ կռիւի դաշտ պիտի առաջնորդէք:

Անդրանիկ դարձեալ ուշադրութիւն չ'ընէր եւ կը քշէ հօտը: Չեմ մեղադրեր Անդրանիկը, այլ կ'անիծեմ Նոյ Նահապետը որ առաջին անգամ այգի տնկեց Հայաստանի մէջ եւ պատճառ եղաւ այսօրուան դժբախտութեան: Եւ խեղճ Արամայիսն ալ զոհուեցաւ այս սպանդին մէջ այդ այգիին:

Ասդին, երբ Ջօր. Անդրանիկ այս սպանդին պատճառ կ'ըլլայ, անդին Մուրատ՝ թշնամիի աջ թեւին վրայ իր 60-ի մօտ ձիաւորներով շղթայ բռնած կը յառաջանար: Թշնամին տեղի կուտար եւ կը քաշուէր դէպի ետ: Սակայն Մուրատ տեսնելով մեր զօրաց կեդրոնին կոտորար, ինքն ալ ստիպուած կ'ըլլար նահանջել:

Գնդ. Թորգոմ, Թէքէտերեւիի կողմը, Աբգարի հետ 400-ի չափ զինուորներով կը ջարդէր թշնամին, նետելով զայն Իլիճայի կողմը: Գնդ. Թորգոմ ալ չկրցաւ օգտագործել իր ձեռք բերած յաջողութիւնը, որովհետեւ Ջօր. Անդրանիկ այնքան ողբալիօրէն կեդրոնը կը վարէր եւ կը փճացներ:

Ջօր. Անդրանիկի ճակատագրական սխալը տեսնելով, այլեւս չկրցայ դիմանալ եւ վերադարձայ սենեակս:

Մութը կռիւեց մեր ողորմելի պարտութեամբ: Երէկուան մեր արհամարհած թշնամին, ուղտի նման ծունկ չօքեցաւ Կարնոյ անառիկ բերդի պարիսպներուն տակ: Այս ամուր վայրը, որ ունէր 60-70 գործածելի թնդանօթ, հազիւ քանի մը անգամ կրակ բացաւ եւ զարմանալի չէ որ այդ կրակն ալ կ'իյնար մեր զինուորներուն վրայ, որովհետեւ գնդ. Խլէպնիկով Ատրպէճանցի թաթար Սէլիտովի բարեկամն էր եւ ի հարկէ հայ զինուորին վրայ պիտի կրակէր:

Պառկած կը մտածէի այս դժբախտութեանց վրայ եւ կ'ուզէի վերլուծել վիճակը եւ գտնել չարիքի պատճառները: Արդեօք Ազգ. Խորհո՞ւրդն էր որ Թիֆլիս կը նստէր, թէ Աղամալեա՞ն, որ Էրզրում կը գտնուէր: Երկար



մտածելէ յետոյ, եկայ այն եզրակացութեան թէ այս աղէտի պատասխանատուն ինքը Ջօր. Անդրանիկն է:

Որպէսզի իմ ըսածները պարզ լինին ընթերցողներուն, բացատրեմ թէ ինչո՞ւ:

Այն օրէն որ Ջօր. Անդրանիկ Էրզրումի հրամանատար կարգուեցաւ եւ ստանձնեց ճակատի պատասխանատուութիւնը, մօտ երկու ամիս շարունակ դեգերեցաւ Ալեքսանդրոպոլի, Կարսի եւ Սարիգամիշի մէջ, վատնելով թանկարգին ժամանակներ: Իսկ երբ Էրզրում հասաւ, փոխանակ ծանօթ, հայրենանուէր եւ փորձ մարդիկ գործի գլուխ կանչելու, ընդունելութիւններ սարքել տուաւ եւ փառքով ու շուքով սկսաւ ժամանակ անցընել: Ան գիտէր Խլէպնիկովի դաւաճանական հակումները, սակայն միջոցներ չխորհեցաւ զայն չէզոքացնելու եւ յարմար սպայ մը անոր տեղը կարգելու:

Չէի գիտեր թէ քանի ժամ մտածեր եւ խորհրդածեր էի, երբ Մուրատ լուսաբացին եկաւ արթնցուց զիս:

- Է՛հ, տունդ չքանդուի, ի՞նչ ես պառկեր: Արդէն թուրքերը քաղաք կը մտնեն: Ելի՛ր որ հեռանանք:

- Հապա Անդրանիկն ի՞նչ եղաւ, ո՞ւր են մեր զինուորները:

- Անդրանիկը չկայ, գացեր հեռացեր է արդէն: Իսկ անդիէն Սմբատ կը հեռագրէ թէ Պիթլիսի վրայ կը յարձակի. ինձ տղայ: Մեր զինուորները Կարսի դռնէն կ'անցնին կը քաշուին: Մնացեր ենք ես ու դու եւ մեր ձիաւորները:

- Հապա այդ Արմենակ Միրոյեա՞նը:

- Վերջի բոպէին ան մեզ դաւաճանեց, իր զինուորները պատրաստուած էին կռուին մասնակցելու իր գլխաւորութեամբ, սակայն ան կնոջը խօսքին անսալով, կնամարդի եւ վատոգիօրէն կինն առաւ եւ ծլկաւ (փախաւ):

Դէ՛հ, ժամանակ չկայ խօսելու, թշնամիին գնդակները կը հասնին մեր դռներուն: Ափսոս որ այս անառիկ բերդը հիննգ-վեց օրուան մէջ կը յանձնենք թշնամիին եւ վատաբար կը նահանջենք, մինչ նոյն թշնամին զբաղեցուցինք Երզնկայի առջեւ երկու ամիս:

## ԳԼՈՒԽ Ը

Կարնոյ անկումին պարագաները – Կարսի դուռ – Խուճապ – Պատասխանատուներ – Մեքաստիոյ աննման հերոսը կը հասնի օգնութեան – Ժողովուրդը անվնաս դուրս կ'ելլէ Կարինէն – Տէվէ Պոյի – Փոքրիկ դէպք մը – Վախկոտները կը սպաննեն Վիքթոր շունս – Հասան Քալէ – Կարնոյ փճացման ծրագիրը եւ ԲԺ. Զարիէվ – Հասան Քալէն կը վառենք:

Հեճանք մեր ձիերը եւ մեկնեցանք դէպի Կարսի դուռը:

Տեսնելու էր Կարսի դրան առջեւ պարզուած ահռելի տեսարանը: Ամեն մարդ կ'ուզէր բռնաբերել առաջ դռնէն դուրս փախչիլ, եւ խուճապի մատնուած կիներու ճիչն ու երախաներու լացը երկինք կը բարձրանային, քաջալերելով թշնամին՝ որ հետզհետէ կը մօտենար բազմութեան, զանոնք կոտորածի մատնելու համար: Չկար պատասխանատու մէկը որ կարգ կանոն մտցնէր բազմութեան ելքը դիրացնելու եւ թշնամին որոշ հետաւորութեան վրայ պահելու:

Այս խուճապին եւ ժողովուրդը թշնամի գնդակներուն առջեւ վտանգելուն պատասխանատուներն էին Կարնոյ զինուորական խորհուրդի անդամները, որոնց նախագահն էր Տիգրան Աղամալեան եւ մանաւանդ Զօր. անդրանիկ որ վերին հրամանատարն էր այս ճակատին: Այս երկու պաշտօնատարները փոխանակ նախ ժողովուրդին ապահովութիւնը խորհելու, փոխանակ նահանջի յատակագիծ պատրաստելու, փոխանակ միջոցներ ձեռք առնելու խուճապն ու իրարանցումը արգիլելու համար, նախ իրենց սեփական կաշին մտածեցին եւ փախան ժողովուրդէն առաջ:

Եթէ հայ ժողովուրդը մոռացկոտ չլինէր, եթէ հայ ժողովուրդը հանրային եւ պաշտօնական դատ ու դատաստան ունենար, ամենէն առաջ պատասխանատութեան կ'ենթարկէր այս հերոսները եւ արդարութիւնը կը գործադրէր անոնց հանդէպ:

Եւ ահա դարձեալ օգնութեան հասաւ պահապան հրեշտակի նման Մեքաստիոյ աննման հերոսը, Սամսոնի լեռներու ռազմիկը եւ Սեւ ծովու քաջայանդուզն «ծովահէն» ասպետական Մուրատ, որ առանց իր պաղարիւնը կորսցնելու, իր քով գտնուած Խոտորաջուրի արծիւին հրամայեց

բռնել պարսպի դիրքերը եւ անխնայ կռուիլ մինչեւ որ իր պատասխանատու առաջնորդներէն լքուած ժողովուրդը անցնէր Կարսի դռնէն:

Եւ շնորհիւ Մուրատի եւ ընկերներու ջանքերուն, ժողովուրդը իր անվերջ սայլերով, ձիերով եւ բեռներով, վերջապէս, առանց մեծ զոհերու կրցաւ դուրս ելլել Կարինէն:

Այս կռիւին մէջ ոյնեցանք բաւական զոհեր մեր լաւ կռուողներէն, որոնցմէ մի քանիին անունները հազիւ կրցայ արձանագրել – Բաբերդցիներ՝ Սեդրաք Կարապետեան (Բալախուր), Բարթող Թովմասեան (Հնտի), Գեորգ Ասլանեան (Երկք, որ նշանաւոր է իր կարմրագոյն երկանաքարերով):

Կարնոյ դրան կռիւը տեւեց մինչևեր ժամը երեքը, երբ ժողովուրդը բաւական ճամբայ կտրելով հասած էր Տէվէ Պոյին: Մենք եղանք անոնց վերջապահը, մինչեւ հասան Տէվէ Պոյի Վառիվայրը; Թշնամին այլեւս մեզ չէր հետապնդեր եւ վտանգը առայժմ անհետացած նկատելով, մեր ձիերը քշեցինք եւ անցանք առաջ: Ամբողջ ճանապարհը լեցուած էր ժողովուրդով ու զինուորներով: Եթէ ընթերցողը գաղափար ունի Տէվէ Պոյիէն Հասան Քալէ ճանապարհին վրայ, կրնայ մտաբերել փախստական բազմութիւնը, որ այդ ամբողջ գծին վրայ առաջ կը շարժէր եւ մենք 4-5.000 կանոնաւոր հրացան բռնող կը հաշուէինք: Արդ, եթէ այս ամբողջ զինուորութիւնն ու կամաւորները լաւ ձեռքերու մէջ լինէին, լաւ հրամանատարութեան ենթակայ եւ լաւ կամակերպուած լինէին, ապահովաբար Կարին 2-3 ամիս շարունակ կը դիմադրէր թշնամիին եւ մեր զօրքը պատուաւորապէս կը կատարէր իր զինուորական եւ հայերնասիրական պարտականութիւնը:

Հոս հարց կը ծագի թէ ո՞վ է պատասխանատուն այս անպատիւ նահանջին կամ աղէտին: Զինուորութի՞ւնը թէ հրամանատարութիւնը; Այս կէտը թող ճշդէն ընթերցողները եւ պատմութեան ուսումնասիրողները իրենց դատողութեամբ:

\*\*\*

Փոքրիկ դէպք մը:

Նահանջի ատեն յայտնուեցան աներես զինուորներ, որոնք թշնամիին առջեւէն վատօրէն փախչելի է տք, հիմա կանանց ու երախաներու միջեւ սկսած էին օդին ուղղեալ հրացաններ արձակել: Այս պարագան

նկատելով, մտրակա շառաչեցի եւ ազդարարեցի, որ դադրեցնեն այս անհարկի հրացանաձգութիւնը: Այս վախկոտներն էին, որ չկրնալով թուրք սպաննել, գացեր սպաններ էին Վիքթոր շունս:

\* \* \*

Երեկոյեան հասանք Հասան Քալէ: Ժողովուրդը լեցուած էր տուներու մէջ, իսկ մենք հազիւ անկիւն մը կրցանք գտնել հանգստանալու: Այստեղ Մուրատ՝ խորհրդակցութեամբ կարգադրեց նահանջող ժողովուրդին եւ զինուորականութեան յետնապահութիւնը ստանձնել: Մուրատի մի ազդարարութեան վրայ՝ բազմութիւնը սկսաւ քաշուիլ դէպի Քէօփրիւքէօյ եւ Մարիգամիշ, կուրծք տալով ձիւնին ու բուքին:

Նստած կը խորհէինք, երբ Մուրատ ըսաւ.

- Մէ՛ դք, որ Էրզրումը չայրուեցաւ, սակայն ատոր մեղքը նորէն կ'իյնայ կարգադրող եւ առաջնորդող անձնաւորութեանց վրայ: Գնդ. Ճանփոլատեանը իր դժոխային մեքենայով կամեցեր էր հինաւորց Չիֆթէ Մինարէ կոչուած մզկիթը օդը հանել, այս պիտի նշանակէր ամբողջ Կարինը աւերակի վերածել, որովհետեւ հոն ամբարուած էր ամբողջ կովկասեան ճակատի գլխաւոր պահեստը – պրուքսելին, տինամիթ, ռումբեր, փամփուշտ, հրացան, թնդանօթ եւայլն, եւայլն, եւ միլիաոներու հասնող հարստութիւն: Այս ամէնը չեղաւ, որովհետեւ ոչ գլուխը յայտնի էր եւ ոչ պոչը: Եւ մանաւանդ սա քրիստոսանման, բարի, հեզահամբոյր Տոքթ. Զաւրիէվը, որ փոխանակ քրիստոնեայ միսիոնար դառնալու, եկած էր քաղաքական գործերու մէջ դեր խաղալու: Ան էր, որ իր բոլոր հոգուովը դէմ կանգնեցաւ Չիֆթէ Մինարէի քանդումին, եւ կը պատճառաբանէր թէ այդ հոյակապ հնութեան փճացումը հակառակ էր քաղաքակրթութեան, սակայն նոյն քրիստոսակերպ բժիշկը կը մոռնար որ տարի մը առաջ գերմանները կը քանդէին Ռէնսի Մայր եկեղեցին:

Որոշեցինք Մուրատի հետ այլևս չլսել ո՛չ աստուածավախ եւ քրիստոսանման մարդերու եւ թ՛չ ալ զինուորութիւնը եւ ժողովուրդը լքող հրամանատարներուն:

Կէս գիշեր էր եւ ժողովուրդը հեռացած էր: Կանխաւ պատուիրած էինք խարոյկները պատրաստել, ուստի հրաման տուինք տալ կրակը:

Քանի մը բոպէի մէջ Հասան Քալէն կը վառէր եւ ամբողջ պահեստները օդը կը ցնդէին, ռումբերն ու փամփուշտները անդադար կը պայթէին եւ մեծ ճակատամարտի մը տպաւորութիւնը կը թողէին:

Ձիերնիս դարձուցինք դէպի Քէօփրիւ Քէօյ, ուր հասանք լուսաբացին: Հոն էր մեր Ջօրավար Անդրանիկ, որ կը հանգստանար: Առանձին բնակարան ունեցանք, բայց չկրցանք տեսնել զինք, միայն երբ առտուն կը մեկնէր, մի զինուորի հետ լուր էր դրկած ինձ եւ կը խնդրէր որ մնանք Քէօփրիւ Քէօյ, մինչեւ որ Խնուսի զինուորութիւնը հասնէր: Պատասխան զրկեցի իրեն.

- Ըսէ՛ Ջօրավարին որ նահանջը շարունակէ եւ խոյս տայ թշնամիէն բռնուելէ: Մենք գիտենք թէ ի՛նչ պիտի ընենք:

Եւ Մուրատին դառնալով ըսի.

- Ջարմանալի մարդ է մեր Ջօրավարը, թողուց Էրզրումը, որուն պաշտպանութեան համար նախապէս պէտք է խորհրդակցէր մեզի հետ, եւ չըբաւ, իսկ հիմա ելեր հրամաններ կ'արձակէ, մինչ մենք ո՛չ մի կապ չունինք անոր հեղ եւ ո՛չ ալ մաս կը կազմենք իր զօրքին: Ինքն է պատասխանատու մարդը եւ պատասխանատու ստորակարգեալներու պէտք է յանձնէ այդ գործերը:

**Ջօրավար Սեպուհ, Էջեր իմ Յուշերէն, Պոսթըն, 1925, էջ 42-49:**

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Արայիկ Մկրտումյան** - ԵՊՀ «Հասարակագիտական և հումանիտար հետազոտությունների ինստիտուտի» պատմության մագիստրոս (aemkrtumyan@gmail.com)

**Արմեն Ճուղության** – ՀՊՏՀ պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր (Jarmen1@yandex.ru)

**Գարիկ Քերյան** - Քաղաքական գիտ. դոկտոր, ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր (g.keryan@ysu.am)

**Գևորգ Մարտիրոսյան** – ՀՊՏՀ ասպիրանտ, Ֆինանսական հաշվառման ամբիոն (gevorg.martirosyan.2015@list.ru)

**Դավիթ Թորոսյան** - Սահմանադրական իրավունքի մագիստրոս, (davidtor6179@gmail.com)

**Վալերի Թունյան** – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (tounyan@rambler.ru)

**Վալերի Միրզոյան** - Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր (valerimirzoyan@yahoo.de)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

#### ВАЛЕРИЙ ТУНЯН

ПЕРЕСЕЛЕНИЕ АРМЯН ЕРЕВАНСКОЙ ОБЛАСТИ

1804-1808 ГГ. ----- 3

#### ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ

ԱՐՎԵՍԸ ----- 17

#### ДАВИД ТОРОСЯН

ПРАВО НА СВОБОДНОЕ РАЗВИТИЕ ЛИЧНОСТИ В КОНСТИТУЦИИ ФЕДЕРАТИВНОЙ РЕСПУБЛИКИ ГЕРМАНИЯ И ПРАВО НА СВОБОДУ ДЕЙСТВИЙ В КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ) ----- 30

#### ԱՐԱՅԻՎ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ, ԴՐԱ ԱՌԱՋԱՑՄԱՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ----- 44

### ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ----- 61

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

ԱԶԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ----- 87

ՀԱՎԵԼՎԱԾ ----- 94

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ----- 102



## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Պատմություն և քաղաքականություն» հանդեսում տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ: Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: Հոդվածի շարվածքը պետք է լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4: Հոդվածի սկզբում անհրաժեշտ է գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն և ազգանունը՝ մեծատառերով: Հղումները պետք է դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշելով աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը): Հոդվածի բանալի բառերը, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է պարունակեն առնվազն 150 բառ: Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցեն (e-mail): Հոդվածներն ուղարկել [generalsepuh@gmail.com](mailto:generalsepuh@gmail.com) էլեկտրոնային հասցեներով: Հանդեսն ունի իր համացանցային կայքը ([www.generalnews.am](http://www.generalnews.am)), ուր զետեղված են նրա էլեկտրոնային տարբերակները, հոդվածների վերաբերյալ կարծիքները, տեղեկություններ խմբագրական խորհրդի կազմի և էթիկայի կանոնների մասին:

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
ԹԻՎ 6(23)**

**Հիմնադիր՝** « Զորավար Սեպուհ պատմաքաղաքական վերլուծական կենտրոն» ՀԿ:

**Գրանցման համար՝** 2111711003993, գրանցման ամսաթիվ՝ 02.02.2018:

**Հաշվառման հասցե՝** Երևան, Էրեբունի թաղամաս, Սարի թաղ 3 – ընդ շարք, բնակարան 39:

**Գործունեության հասցե՝** Երևան, Ե. Քոչար, 8/8, հեռ, 011-562519, 091-56-25-19, 077 – 67-20-87:

**Համարի պատասխանատու՝** Թ. Սարգսյան

**Ստորագրված է տպագրության՝** 08.05.2023

Թուղթը՝ օֆսեր: Չափսը՝ 70X100/16;  
Ծավալը՝ 12 պայմ., տպ. մամուլ:  
Տպագրության եղանակը՝ օֆսեր:  
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը  
Հասցեն՝ Երևան, Ա. Միկոյան փող., 2/2  
Էլ. փոստ՝ [tirpublishinghouse@gmail.com](mailto:tirpublishinghouse@gmail.com)  
Հեռ. (+374 94) 50 99 00

